

ԱՏՐՊԵՅՃԱՆ, ԹՈՒՐԻՈՅ ԱԶՎՅՈՒԹԵԱՄԲ, ԼԱՅՆԱԾԱԽԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՊՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՍԱՆՉԱԶԵՐԾԵ ԱՐՅԱՆԻ ԴԵՄ

27 Սեպտեմբերի կանուխ առաւօտեան Արցախ-Ատրպեյճանի շփման գիծի ամբողջ երկայնքին Ատրպեյճանի Նախաձեռնեց աննախընթաց պատերազմական գործողութիւններու:



Ատրպեյճանի Նախաձեռնած Նախայարձակումը պատճառ դարձաւ, որ Ե՛ւ Զայաստանի Զանրապետութեան, Ե՛ւ Արցախի Զանրապետութեան տարածքին յայտարարուի ռազմական դրութիւն եւ ընդհանուր զօրահաւաք, 18 տարիքը ամբողջացուցած բոլոր տղամարդիկը կանչուին բանակ: Զօրաշարժը աննախադէպ էր, մինչեւ երեկոյեան ժամերը հազարաւոր հայորդիներ դիմած էին հայոց բանակի զինուորական կեդրոններ՝ արձանագրուելու համար իբրեւ կամաւոր: Ինչպէս

Շար.՝ 19 3 >

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՒԿՈՍԻ «ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՆ» ՀԱՏՈՐԻ ԱՐԱԲԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅԱՒ ՀՈԳԵԽՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

Սուրիոյ Զրիստոնեայ Զամայնքներու Զոգելոր Առաջնորդներու Ժողովը, որ քրիստոնեութեան համագործակցութեան իւրայատուկ արտայատութիւն

մը կը հանդիսանայ, ամսական հերթական կիսորդ գումարեց Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2020-ին, Զալէպի Ասորի Ուղղափառ Զամայնքի Առաջնորդարանէն ներս, հիւրընկալութեամբ Ասորի Ուղղափառ Զամայնքի Պատրիարքական Փոխանորդ Գերաշնորհ Պութոս Բասիս Եպիսկոպոսի, ներկայութեամբ հոգելոր առաջնորդներու, ընկերակցող հոգելորականներու եւ համայնքային ներկայացուցիչներու:



Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի հրաւերով՝ նիստին հիւրաբար ներկայ գտնուեցաւ Արամ Ա.

Շար.՝ 19 12 >

ՀԱՅ ԵՐԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ԱՐՈՐԶ ԱՐՅԱՆԻ ԵՒ ՀԱՅՈՅ ԲԱՆԱԿԻ ԱՆՍԱՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Երեքշաբթի, 29 Սեպտեմբեր 2020-ին, յետմիջօրեի ժամը 5:00-ին, հայ երեք Զամայնքապետներուն Նախագահութեամբ Զալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ երեկոյեան ժամերգութիւն եւ զօրակցական



արօթք՝ Արցախի մեր հայրենակիցներուն, Զայաստանի եւ Արցախի պետականութեան եւ հայոց բանակին անսասան պահպանման համար:

Շար.՝ 19 12 >

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ` ՀՅԴ ԲԻՐՈՅԻ

Զայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրօն կը դատապարտէ Ատրպեյճանի կողմէ սանձազերծուած պատերազմը Արցախի շփման գիծի երկայնքով եւ խաղաղ բնակավայրերու վրայ: Թուրքիան յայտարարած է իր անվերապահ աջակցութիւնը Ատրպեյճանին:

Զայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր համահայկական ամբողջ կարողականութիւնը դրած է Զայաստանի եւ Արցախի Զանրապետութիւններու տրամադրութեան տակ՝ յատկապէս աջակցելով պաշտպանութեան բանակին եւ արտաքին ճակատի վրայ:



Պատերազմի ժամանակ թիկունքի ամրութիւնը պահելու համար կենսական է համահայկական ուժերու լարում, զգօնութիւն եւ երկրին մէջ կայունութեան պահպանում:

Կոչ կ'ուղղենք միջազգային հանրութեան՝ դատապարտելու Ատրպեյճանի գործողութիւնները, որոնք յղի են ամբողջ տարածաշրջանը ապակայունացնելու վտանգներով:

Կոչ կ'ուղղենք Թուրքիոյ՝ դադարեցնելու հակամարտութեան իր մասնակցութիւնը եւ գոնէ անգամուան մը համար տարածաշրջանին մէջ կառուցողական կեցուածք ցուցաբերելու:

Պատերազմական գործողութիւններու շարունակութեան ամբողջ պատասխանատուութիւնը պիտի կրեն Արպեյճանն ու Թուրքիան:

Մենք կը ձեռնարկենք մեր հնարաւորութիւններուն համապատասխան անհրաժեշտ բոլոր քայլերուն՝ դիմակայելու համար Ատրպեյճանի եւ Թուրքիոյ յարձակողական քաղաքականութեան:

ՀՀԴ ԲԻՐՈ
 27 Սեպտեմբեր 2020

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ` ՍՈՒՐԻԱԶԱՅԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

27 Սեպտեմբերին Արցախի դեմ Ատրպեյճանի շղթայազերծած զինուորական գործողութիւնները, Թուրքիոյ բարոյական, ֆիզիքական եւ զինուորական ուղղակի մասնակցութեամբ, անգամ մը եւս կը հաստատեն Պաքուի իշխանութիւններուն ռազմապաշտ եւ Նախայարձակ վարքագիծը:

Աւելին, այս անգամ ատրպեյճանական զինուած ուժեր թիրախ կ'ընտրեն եւ կը իրթնակոծեն Արցախի մայրաքաղաքն ու քաղաքացիական բնակավայրերը՝ սպառնալով անմեղ քաղաքացիներու, Նոյնիսկ մանուկներու կեանքին:

Զայոց Յեղասպանութենէն 105 տարի վերջ, անպատիժ մնացած Թուրքիան ցեղասպանական Նոյն ծրագիրներով, այս անգամ Ատրպեյճանին զօրակցելով, կը սպառնայ Զայաստանին ու հայութեան՝ ուղղակի դերակատարութիւն ունենալով պատերազմի հրահրման մէջ:

Միւս կողմէ Պաքու յայտնապէս չէ համոզուած տակաւին, որ ուժի կիրարկումով եւ ԵԱՀԿ Մինսքի որոշումներուն խախտումով պիտի չյաջողի պարտադրել իր կամքը, եւ ինչպէս Նախորդ իր բազմաթիւ փորձերուն, այս անգամ եւս ջախջախիչ պարտութիւն պիտի կրէ, որովհետեւ հայ զինուորը կը մարտնչի ի՛ր հողին, ի՛ր հայրենիքին ու խաղաղութեան հաստատման համար, մինչդեռ Ատրպեյճան կը ստիպուի վարձկաններ ապահովել՝ զիրենք շահագործելու իր ծաւալապաշտ ու տարածաշրջանի խաղաղութեան սպառնացող քաղաքականութեան համար:

Զայոց յաղթական բանակը սահմանային գիծի վրայ յանձն առած է հայրենիքի պաշտպանութեան սրբազան առաքելութիւնը:

Ի տես այս իրավիճակին, սուրիահայ երեք կազմակերպութիւնները խստիւ կը դատապարտեն Ատրպեյճանի Նախայարձակ վարքագիծը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ աւերներու եւ մարդկային ողբերգութեան պատճառ հանդիսացող Թուրքիոյ կողմէ այս անգամ Զարաւային Կովկասի տարածաշրջանը բռնկեցնելու բացայայտ ոտնձգութիւնները եւ կոչ կ'ուղղեն միջազգային հանրութեան դատապարտելու Ատրպեյճանի եւ Թուրքիոյ

Զայ Երիտասարդաց Միութիւն
 Նոր Սերունդ Մշակութային Միութիւն
 Թեքէան Մշակութային Միութիւն
 Զալէպ, 28 Սեպտեմբեր 2020

Շար.՝ 19 10 >

Խմբագրական

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒժԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՍԽՐԱՆՔՆԵՐ ԳՈՐԾԵԼ

27 Սեպտեմբերին Արցախի սահմաններու ողջ լայնքով Ատրպեյճանի սանձազերծած գործողությունները այս անգամ կը տարբերին Նախորդ յարձակումներէն իրենց ծրագրաւորումով եւ հեռակայ նպատակներով: Այս անգամ յարձակումի ծրագրումն ու ղեկավարումը կ'ուղղորդէ Թուրքիան՝ ուղղակի մասնակցելով ե՛լ իր զինուորականներով, ե՛լ օդանաւերով: Ատրպեյճանի օդային հարուածները կը ղեկավարուին թուրք մասնագետներու կողմէ՝ Էրզրումի եւ Կարսի շրջաններէն:

Ատրպեյճանի իշխանութիւնները իւրովի չկարենալով բանակցութիւններու քաղաքակիրթ միջոցին դիմել, իրենց հասարակութեան դիմաց արդարանալու եւ երկրի ներքին հարցերը քողարկելու համար դարձած են, փաստօրէն, Թուրքիոյ շահերուն սպասարկուները: Արցախի դէմ զինուորական գործողութիւններու սանձազերծումը այս անգամ, Նախօրոք մշակուած թուրք-ատրպեյճանական միատեղ ծրագիր է:

Միջին Արեւելքէն, Արեւելեան Միջերկրականէն վերջ, Թուրքիա այս անգամ կը ջանայ ապակայունացնել Հարաւային Կովկասի տարածքը՝ յագուրդ տալու իր փանթորանկիզմի ախորժակներուն:

Լարուածութիւնը Ատրպեյճանի միջոցով փոխադրելով Հարաւային Կովկաս, Թուրքիա կը ջանայ աշխարհաքաղաքական փոփոխութիւններ պարտադրել եւ իր ազդեցութիւնը ընդլայնել ինչպէս Միջին Արեւելքի, այնպէս ալ Հարաւային Կովկասի մէջ:

Հայաստանն ու Արցախը այս անգամ կը պատերազմին Նաեւ Թուրքիոյ դէմ:

Այս իրավիճակին լոյսին տակ, ակներեւ են Ատրպեյճանի ապատեղեկատուական արշաւն ու միջազգային լրատուամիջոցներու ներկայացուցիչներուն Ատրպեյճան մուտքը արգիլելու ճիգերը: Աւելին, Չորեքշաբթի, 1 Հոկտեմբերին Արցախի Մարտունի քաղաքին մէջ Ատրպեյճանական կողմին օտար լրագրողներու թիրախ դարձնելը եւս միջազգային հանրային կարծիքը իրականութիւններէն զերծ պահելու Ատրպեյճանի ճիգին ցայտուն փաստն է:

Արցախ ինչպէս միշտ, այս անգամ եւս իր դռները բաց պահած է միջազգային լրագրողներու դիմաց, յատկապէս անկախ լրագրողներու, որպէսզի անոնք կարելիութիւն ունենան ճշմարտութիւնը արձանագրելու եւ միջազգային հանրութեան իրականութիւնը պարզելու: Երեւոյթ մը, որ բնականաբար յարձակողապաշտ Ատրպեյճանին գայրոյթը պիտի յառաջացնէր:

Հակառակ այս բոլորին, Հայոց բանակը, իրեն միացող հարիւրաւոր հայ կամաւորներով, սխրանքներ կը գործէ, կենաց մահու մարտեր կը մղէ ու արիաբար կը զգետնէ թշնամիին մեծաթիւ անօդայնութիւն թռչող սարքերը, հրասայլերը եւ զրահամեքենաները:

Վերջին տուեալներուն համաձայն, Արցախի բանակը խոցած է Ատրպեյճանի 11 ուղղաթիռ, 4 ինքնաթիռ, 96 անօդայնութիւն թռչող սարք, 184 զրահամեքենայ եւ հրասայլ, մէկ զինուորական օդանաւ, 82 զինուորական ինքնաշարժ եւ 10 զրահափոխադրիչ:

Հայոց բանակը այս յաղթանակը կ'արձանագրէ թիւով եւ զինուորական կարելիութիւններով զինք զերազանցող Ատրպեյճանի բանակին դէմ, ինչ որ անգամ մը եւս ցոյց կու տայ հայ զինուորներուն մարտունակ ոգին, հնարամտութիւնը եւ հայրենի հողին տէր կանգնելու վճռականութիւնը:

Միւս կողմէ Հայկական դիւանագիտութիւնն ու Հայ Դատի աշխարհասփիւռ յանձնախումբերը միջազգային հանրութիւնը, իրաւապաշտպան մարմինները իրազեկ պահելով Ատրպեյճանի յարձակողապաշտ մօտեցումին, խաղաղ բնակչութեան հրթիռակոծումին, Թուրքիոյ եւ Ատրպեյճանի դատապարտումը կը պահանջեն:

Հայութիւնը նոր Սարդարապատի դէմ յանդիման կանգնած է: Պահուն լրջութիւնը կը պահանջէ միասնական մտայնութիւն, սեփական ուժերուն վստահելու կամք ու երկարաշունչ պայքար, որպէսզի հայոց բանակը այս անգամ ոչ միայն ետ մղէ թշնամին, այլեւ խաղաղութիւն պարտադրէ:

«Գ.»

-Հինգշաբթի, 1 Հոկտեմբեր 2020-ին, ՀՀ Սուրիոյ դեսպան Մուհամմետ Հաքիմ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց, որ Սուրիա եւ Սուրիոյ ժողովուրդը խստիւ կը դատապարտեն Ղարաբաղի Հայկական հողերուն ուղղութեամբ սանձազերծուած յարձակումները, ակեցնելով, որ Ղարաբաղի պարագային Սուրիան ինչպէս Նախապէս, ներկայիս եւս կոչ կ'ուղղէ պայմանաւորուելու ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի որոշումներով, որոնք քաղաքական խաղաղ լուծման կը յանգեցնեն:



Հաքիմի շեշտեց, որ թրքական ուժերուն հիւսիսային Սուրիայէն ահաբեկիչներ Հայաստան ուղղարկելու շուրջ ՀՀ արտաքին գործոց նախարարին յայտարարութիւնը ստոյգ է:

Ան յայտնեց, որ ըստ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան անդամ երկիրներու համաձայնութենէն մեկնելով՝ Հայաստանի, Պելառուսի, Ռուսիոյ եւ Սովիետական Միութենէն անկախացած պետութիւնները իրաւունք ունին օգնութեան ձեռք երկարելու յիշեալ պետութիւններէն մեկուն գրոհի ենթարկուելուն պարագային: Ազերիական ուժերը Ղարաբաղի վրայ կը յարձակին ու թէեւ Ղարաբաղը պաշտօնապէս չէ ճանցուած որպէս անկախ պետութիւն, սակայն ան հայկական հողատարածք է եւ յարձակումները տեղի կ'ունենան հայկական այս հողատարածքին ուղղութեամբ, հետեւաբար անհրաժեշտ է տարածաշրջանային եւ ռուսական վերաբերմունքին մէջ նկատի առնել այս կետը:

Հաքիմի հաստատեց, որ զինուորական գործողութիւնները կը սաստկանան այնքան ատեն որ թրքական ուժեր նեցուկ կը կանգնին Ատրպեյճանի: Անոնք իրենց այս վարքագիծով կը սպառնան ինչպէս Կովկասի, այնպէս ալ Սուրիոյ, Լիպիոյ եւ Իրաքի անվտանգութեան:

Դեսպանը ակեցնելով ըսաւ, որ Հայաստանի մէջ սուրիահայերուն վիճակը լաւ է եւ դեսպանատունը կապ պահած է անոնց հետ: «Սուրիահայերուն վիճակը կայուն է: Մենք մնայուն կապի մէջ ենք անոնց հետ՝ համաձայն Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ ալ Մուալլէմի թելադրանքին», եզրափակեց դեսպանը:

-Չորեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան տուեալներով Սուրիոյ վարժարաններուն մէջ պսակածէ ժահրով վարակուած 41 պարագաներ յայտնաբերուեցան:



Դպրոցական առողջապահութեան տնօրէնութիւնը յայտնեց, որ վարակուածներուն մեծամասնութիւնը՝ 17 վարակուած, արձանագրուած է Դամասկոսի արուարձանին մէջ, մինչդէռ Թարթուսի մէջ՝ 4, Սուէյտայի մէջ՝ 2, Հալէպի մէջ՝ 4, Համայի մէջ՝ 2, Հոմսի մէջ՝ 5, իսկ Բուսէյթայի մէջ 6 աշակերտ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կը պահանջէ իր բոլոր ազգապատկան կալուածներու վարձակալներէն, ըլլան անոնք Հալէպէն ներս թէ դուրս, ամենակարճ ժամանակամիջոցին կապ հաստատել մեզի հետ ստորեւ նշուած միջոցներով, յստակացնելու համար իրենց կալուածներու մէջ բնակողները կամ զանոնք զբաղեցողները եւ կարգաւորելու յետեւ իրենց կուտակուած պարտքերը փակելու գործողութիւնը, մինչեւ 30 Նոյեմբեր 2020 (պսակածէ ժահրի պատճառով ժամկետը երկարաձգուած), այլապէս Կալուածոց Հոգաբարձութիւնը պիտի դիմէ օրինական միջոցներու:
Հեռաձայն - 0096321-2122756
WhatsApp - 0946901826
Ել. նամակ - periotemal@gmail.com
Կալուածոց Հոգաբարձութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կարիքը ունի Ազգային շէնքի համար պահակ: Նախընտրելի է, որ թեկնածուն ըլլայ միջին տարիքի:
Փափաքողները կրնան դիմել Ազգային Առաջնորդարանի Կալուածոց Հոգաբարձութեան գրասենեակ:
Կալուածոց Հոգաբարձութիւն

Լուրեր Հայաշխարհին

13 ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՉԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆԷ ԿՆՔԵՆՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

29 Սեպտեմբերին ԲՅԴ Հայաստանի Գերագույն Մարմինին նախաձեռնությամբ, ԲՅԴ «Սինոն Վրացեան» կեդրոնին մեջ տեղի ունեցավ Հայաստանի քաղաքական տասներեք կուսակցություններու խորհրդակցություն՝ քննարկելու համար 27 Սեպտեմբեր 2020-ին, Թուրքիոյ բացայայտ աջակցութեամբ, Ատրպեյճանի կողմէ սանձազերծուած պատերազմին իբրեւ հետեւանք ստեղծուած կացութիւնն ու Հայաստանի եւ



Արցախի Հանրապետութիւններուն միջեւ ռազմավարական դաշինք կնքելու անհրաժեշտութիւնը:

Խորհրդակցութեան մասնակցեցան Ազատութիւն, Ազգային Օրակարգ, Ազգային Ինքնորոշում Միաւորում, Բարգաւաճ Հայաստան, Երկիր Ծիրանի,

Շար. Էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ՄԵՆԷ ՊԻՏԻ ԶԻՆԱԴԵՆԷ ԶԻՆԱԴԱԿԱՐ, ՄԵՆԷ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԿՐԵՆԷ ԶԻՆԱԴԱԿԱՐ»

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետ Տիգրան Ալինեանի հետ երէկ հանդիպում ունեցած է կամաւորականներու հետ: Նախագահը յայտնած է, որ զօրքը հիւսիսային հատուածին մէջ յաջողութիւններ արձանագրած է, ու հաւաքուածներուն պատմած է Հաթերքի գումարտակի հրամանատարին հետ իր զրոյցի մասին, որուն մէջ խօսած են նաեւ Մռաւի սարերուն մէջ տիրող իրավիճակին մասին:



Արայիկ Յարութիւնեան վստահեցուցած է, որ պէտք է գիտակցինք, որ մեր կեանքէն կախուած է մեր ապագան, մեր սերունդներու ապագան, սերունդներու՝ Արցախի հողին մէջ ապրելու իրաւունքը ու արժանապատուութիւնը:

«Կ'ուզեմ համոզուած ըլլաք, որ մենք կանգնած ենք միևնույն վերջ: Ժողովուրդ, մենք պիտի չխնդրենք զինադադար: Սա բոլորս պիտի իմանանք: Մենք պիտի պարտադրենք զինադադար: Եթէ մենք խնդրենք զինադադար, ատիկա պիտի ըլլայ Հայաստանի վախճանը, ոչ թէ Արցախի, որովհետեւ կը կռուինք ոչ թէ Ատրպեյճանի դէմ, դուք կը տեսնեք, Թուրքիոյ դէմ: Իսկ Թուրքիոյ համար հետաքրքրական է Արցախը, ճապարայիլը, Լաչինը, Հորատիզը: Թուրքիոյ համար հետաքրքրական է Հայաստան աշխարհը, ամբողջութեամբ՝ իր համաթուրանական ծրագիրները իրականացնելու առումով: Ատոր համար բոլորս պիտի հասկնանք՝ մեր կեանքէն, մեր քայլէն, մեր ապրելու իրաւունքէն կախուած է մեր ապագան: Առաջին հերթին՝ ապրելու իրաւունքէն: Եւ պիտի փորձենք ապրիլ», ըսած է նախագահ Յարութիւնեան:

«Կ'ուզեմ համոզուած ըլլաք, որ մենք կանգնած ենք միևնույն վերջ: Ժողովուրդ, մենք պիտի չխնդրենք զինադադար: Սա բոլորս պիտի իմանանք: Մենք պիտի պարտադրենք զինադադար: Եթէ մենք խնդրենք զինադադար, ատիկա պիտի ըլլայ Հայաստանի վախճանը, ոչ թէ Արցախի, որովհետեւ կը կռուինք ոչ թէ Ատրպեյճանի դէմ, դուք կը տեսնեք, Թուրքիոյ դէմ: Իսկ Թուրքիոյ համար հետաքրքրական է Արցախը, ճապարայիլը, Լաչինը, Հորատիզը: Թուրքիոյ համար հետաքրքրական է Հայաստան աշխարհը, ամբողջութեամբ՝ իր համաթուրանական ծրագիրները իրականացնելու առումով: Ատոր համար բոլորս պիտի հասկնանք՝ մեր կեանքէն, մեր քայլէն, մեր ապրելու իրաւունքէն կախուած է մեր ապագան: Առաջին հերթին՝ ապրելու իրաւունքէն: Եւ պիտի փորձենք ապրիլ», ըսած է նախագահ Յարութիւնեան:

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱԶՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅԱԾ Է ՎԱՍԻՄԻ ՓՈՒԹԻՆԻՆ ՀԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին հետ:

Հայաստանի վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան տեղեկացուցիչ, որ վարչապետը մանրամասնօրէն անդրադարձած է Ատրպեյճանի սանձազերծած զինուորական յարձակումին հետեւանքով տեղի ունեցող զարգացումներուն: Ռուսիոյ նախագահը խոր մտահոգութիւն յայտնած է շարունակուող զինուորական գործողութիւններուն գծով եւ կարելոր համարած զինադադարի դրութեան պահպանումն ու ապամագլցողականութեան ուղղութեամբ քայլերու իրականացումը:



Հրատարակուած. «Այս Պաշտօն Մենք Պէտք Է Ըլլաք Միասնապէս. Հայրենիքի Պաշտպանութեան Հարցը Մեր Գերխնդիրն Է»

Դաշնակցութեան «Շուշիի առանձնակի գումարտակ»ի հիման վրայ գործող Կամաւորական շարժման համակարգողներու կոչին ընդառաջելով, բազմաթիւ քաղաքացիներ կամաւորաբար հաւաքուեցան Արամ Մանուկեանի արձանին մօտ:

Ներկաներուն «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութեան նախագահ Հրանդ Մարգարեանը կոչով մը դիմեց եւ ըսաւ. «Մենք միշտ խօսել ենք ազգ-բանակի, համաժողովրդական բանակի, պահեստազօրը կազմակերպելու, պատրաստ լինելու մասին: Յաւոյք, մեր կոչերը շատ ուշ են արձագանգ գտել, հազիւ կարողացել ենք մենք պատրաստուել: Բայց պատրաստ ենք: Պատրաստ ենք եւ սպասում ենք հրամանի, պատրաստ ենք եւ ասում ենք՝ ոչ մի քաղաքական հարց, ոչ մի քաղաքական տարածայնութիւն չի կարող այսօր մեր միասնականութեան մէջ որեւէ կեղտ իջեցնել»:



Ան յայտնեց, որ ազգովին դէպի ճակատ պէտք է երթալ, դէմ դնել ամէն սպառնալիքի եւ ուժով հակադարձել թշնամիի հարուածներուն:

«Մենք պէտք է յաղթենք այս պատերազմում եւ այս պատերազմի յաղթանակը պէտք է նուիրենք մեր եկող սերունդներին: Գերխնդիրը թշնամին է, որին պէտք է ծունկի բերել, այս պահին չունենք այլ գերխնդիր, կը գայ օրը, նորէն կը հաւաքուենք, նորէն կը քննարկենք խնդիրները, բայց այսօր ունենք մէկ խնդիր՝ թշնամին ծնկի բերելու եւ դրան պէտք է պատրաստ լինենք»:

Հրանդ Մարգարեանը յայտարարեց, որ իբրեւ Գեորգ Զաւուշի, Սերոբ Աղբիւրի, Արամ Մանուկեանի, Վարդան Դուշմանի, Թաթուլ Կրպեանի ժառանգորդներ, ԲՅԴ-ն պէտք է ըլլայ առաջամարտիկը եւ քալէ առջեւէն. «Պէտք է գնանք առջեւից՝ մեզ հետ տանելով ժողովուրդն ու ազգը: Մենք պէտք է կարողանանք սովորեցնել, որ հայրենասիրութիւնը գործունէութիւն է, որ պէտք է կատարուի, ոչ թէ խօսք է: Եւ այդ գործի ապացոյցը պէտք է լինենք մենք բոլորս», ըսաւ Մարգարեան:

ԱՏՐՊԵՅՃԱՆ, ԹՈՒՐԷՒՈՅ...

Սկիզբ՝ էջ 1

2016 թուականի ապրիլեան քառօրեայ պատերազմին, այս անգամ եւս ԲՅ Դաշնակցութիւնը առաջիններէն էր, որ ընդառաջեց ընդհանուր զօրաշարժի կոչին, եւ ԲՅԴ Շուշիի առանձնակի գումարտակի հիման վրայ ստեղծուած «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութեան բազմաթիւ կամաւորներ ուղղուեցան առաջնագիծ:

Թշնամի Ատրպեյճանի անօդաչու թռչող սարքերով հրթիռակոծեց մայրաքաղաք Ստեփանակերտը եւ այլ բնակելի վայրեր, ինչ որ պատճառ դարձաւ բազմաթիւ քաղաքային զոհերու եւ վիրաւորներու արձանագրման: Սա ցայտուն երեւոյթ մըն էր Ատրպեյճանի կողմէ մարդկային իրաւունքներու կոպիտ խախտման: Սակայն Արցախի պաշտպանութեան բանակը հերքեց Ատրպեյճանի պաշտպանութեան նախարարութեան տարածած այն տեղեկութիւնը, թէ ատրպեյճանական բանակը գրաւած է արցախեան 6 բնակավայրեր: Արցախի Պաշտպանութեան նախարարութիւնը նաեւ հաղորդեց, որ Ատրպեյճանի կողմէ Արցախի ուղղութեամբ սանձազերծուած պատերազմական գործողութիւններուն իբրեւ հետեւանք ատրպեյճանական կողմը ունի կենդանի ուժի եւ զինուորական սարքերու մեծ կորուստներ: Արցախի պաշտպանութեան բանակի ստորաբաժանումներուն կողմէ միևնույն 1 Հոկտեմբեր ոչնչացուած են թշնամիի 7 ուղղաթիռներ, շուրջ 83 անօդաչու թռչող սարքեր եւ 166 հրասայլեր ու հետեւակի մարտական մեքենաներ, ատրպեյճանական կողմէն սպանուած է 920 զինուոր : Ըստ ԲՅ Պաշտպանութեան նախարարութեան, հայկական կողմը ունի 90 զոհ, 100 վիրաւոր:

30 Սեպտեմբերին, ԲՅ Պաշտպանութեան նախարարութեան մամլոյ խօսակ Շուշան Ստեփանեան յայտնեց, որ «Ատրպեյճան Արցախի դէմ յարձակողական գործողութեան օդային ղեկավարումը յանձնեց Թուրքիոյ ռազմաօդային ուժերուն»:

Թուրքիան ուղղակիօրէն կը մասնակցի Արցախի եւ Հայաստանի դէմ Ատրպեյճանի պատերազմին:

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՈՐՈՇՐՁԸ. «ԹՇՆԱՄԻՆ ՊԵՏՔ Ե ԶԱՍԿԱՆԱՅ, ՈՐ ԱՐՑԱԽԻ ԹԻԿՈՒՆՔԻՆ ԿԱՆԳՆԱԾ Ե ԶԱՍԱՅՆ ԶԱՅՈՒԹԻՒՆԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 27 Սեպտեմբերի կեսօրին ուղերձ յղեց հայ ժողովուրդին՝ անդրադառնալով Ատրպեյճանի կողմէ սանձազերծուած յարձակումին եւ հաստատելով, որ հայութիւնը ամբողջութեամբ Արցախի կողքին է: Ստորեւ՝ ուղերձը.-

«Այսօր վաղ առաւօտից Արցախի Հանրապետութիւնը ենթարկուել է ատրպեյճանական զինուած ուժերի յարձակումին:

Ռմբակոծութեան են ենթարկուում Արցախի խաղաղ բնակչութիւնը, մայրաքաղաք Ստեփանակերտը, Արցախի Հանրապետութեան քաղաքացիական ենթակառուցուածքները: Այս պահի դրութեամբ կան արդէն զոհեր եւ վիրաւորներ, այդ թւում՝ խաղաղ բնակչութեան շրջանում:



Օգտագործելով ծակր ս պ ա ռ ա գ ի ն ու թ ի ն լ , հրետանի, հետեւակ՝

հակառակորդը գրոհի է ենթարկում պաշտպանութեան բանակի դիրքերը՝ բոլոր ուղղութիւններով: Պաշտպանութեան բանակը այս պահի դրութեամբ յամառ մարտեր է մղում եւ պատուով է կատարում Արցախը պաշտպանելու իր խնդիրը՝ ձեռնարկելով իրավիճակից բխող գործողութիւններ:

Սիրելի՛ ժողովուրդ,

Իլիամ Ալիեւի բռնատիրական վարչակազմը վերստին անցել է պատերազմական գործողութիւնների: Դա հայ ժողովրդին յայտարարուած պատերազմ է: Դա պատերազմ է մեր անկախութեան, ազատութեան եւ արժանապատուութեան դէմ:

Հայ ժողովուրդը պատրաստ է այդ պատերազմին: Զանգի միշտ սթափ գիտակցել է, որ հայատեացութիւնը, թշնամանքը եւ ատելութիւնը, որով տասնամեակներէ ի վեր ատրպեյճանական բռնապետութիւնը սնում է իր ժողովրդին, չէր կարող որեւէ այլ արդիւնքի յանգեցնել, քան պատերազմը: Ատրպեյճանի բռնապետութիւնն իր իսկ վարած հակահայկական քաղաքականութեան պատանդն է դարձել եւ այսօր փորձում է արդարացնել իր իսկ որդեգրած քարոզչական խոստումները՝ Ղարաբաղեան հակամարտութիւնը ռազմական միջոցներով լուծելու մասին:

Հայ ժողովուրդը պատրաստ է արժանի հակահարուած հասցնել թշնամուն: Հայաստանի Հանրապետութիւնը Արցախի Հանրապետութեան անվտանգութեան եւ անկախութեան երաշխաւորն է: Եւ Հայաստանի Հանրապետութիւնը իր բնակչութեան ու պետական համակարգի ողջ ներուժով այսօր կանգնած է Արցախի թիկունքին: Մենք գործադրելու ենք հնարաւոր եւ անհնարին ամեն ջանք մեր հայրենիքի սահմանները անառիկ պահելու, մեր ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու համար: Որպէս 1994թ. հրադադարի համաձայնագիրը ստորագրած կողմ՝ Հայաստանի Հանրապետութիւնը քաղաքական, դիւանագիտական եւ ռազմական հարթակներում ձեռնարկելու է անհրաժեշտ գործողութիւններ՝ ԼՂ ժողովրդի ֆիզիքական անվտանգութիւնը ապահովելու եւ հակառակորդին խաղաղութիւն պարտադրելու նպատակով:

Այս պահի դրութեամբ հակառակորդն արդէն իսկ կրում է մարդկային եւ զինտեքնիկայի զգալի կորուստներ: Ատրպեյճանը պետք է քաջ գիտակցի, որ մեր բանակի մարտունակութիւնն այսօր բարձր է, քան երբեւէ: Թշնամին պետք է հասկանայ, որ Արցախի թիկունքին այսօր կանգնած է համայն հայութիւնը:

Մենք միասնական ենք ինչպէս միշտ: Մենք միասնական ենք, ինչպէս եղել ենք մեր պատմութեան վճռորոշ բոլոր պահերին, երբ ոսոխը սպառնացել է մեր գոյութեանը, մեր ինքնութեանն ու արժեքներին: Ատրպեյճանի բռնապետ իշխանութիւնները պետք է հասկանան, որ անհնարին է ծնկի բերել հայ ժողովրդին: Մենք մեր հազարամեայ պատմութեան ընթացքում ունեցել ենք բազմաթիւ վճռորոշ պահեր եւ յաղթահարել բազում դժուարութիւններ: Մեր գործն արդար է եւ այս յանցաւոր ոտնձգութիւնը եւս արժանի հակահարուած կը ստանայ:

Մենք լաւ գիտակցում ենք, որ ատրպեյճանական բռնապետութիւնը ռազմական գործողութիւններ կարող է սկսել նաեւ Հայաստանի Հանրապետութեան սահմանների ուղղութեամբ ու դիմել տարբեր սադրանքների՝ տարածաշրջանում իրավիճակն ամբողջովին ապակայունացնելու համար: Այս է պատճառը, որ կառավարութեան որոշմամբ Հայաստանի Հանրապետութիւնում յայտարարուել է ռազմական դրութիւն եւ ընդհանուր զօրահաւաք:

ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահ պետութիւնների եւ միջազգային ողջ հանրութեան ուշադրութիւնը հրաւիրում եմ իրավիճակի լրջութեան վրայ: Հարաւային Կովկասում լայնածաւալ պատերազմի բռնկումը, որի շեմին մենք հիմա կանգնած ենք, կարող է ամենաանկանխատեսելի հետեւանքներն ունենալ: Այն կարող է դուրս գալ տարածաշրջանի սահմաններից եւ ձեռք բերել շատ անելի լայն մասշտաբներ՝ սպառնալով

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԶԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ՈՒ ԱՐՑԱԽԻ ՀՉՕՐԱՑՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔԱՆԶԻՐ ՀԱՅՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Ե»

Վերջին երկու օրերու ընթացքին Ատրպեյճանի կողմէ Արցախի վրայ կատարուած զինուորական յարձակումը ողջ հայութիւնը կը հրաւիրէ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնելու հայոց բանակին, Արցախին ու Հայաստանին: Խոր գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ հայոց բանակը ամուր վճռակամութեամբ կը շարունակէ հակադարձել Ատրպեյճանի յարձակումներուն:

Այս վճռադրոշմ պահուն, երբ մեր հայրենիքին անբաժան մասը կազմող Արցախը վտանգի ենթարկուած է, մեր ժողովուրդը Հայաստանի թէ Սփիւռքի մէջ չի կրնար սոսկ զգացական սահմաններուն մէջ իր զօրակցութիւնը յայտնել: Անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր հայ իր արեան կանչով եւ իր հայրենիքին նկատմամբ ունեցած անխախտ հաւատարմութենէն մղուած, գործնապէս իր օժանդակութիւնը բերէ հայոց բանակի առաւել հզօրացման:

Մենք մնայուն կապի մէջ ենք Հայաստանի ու Արցախի պետական իշխանութեան, ինչպէս նաեւ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ: Հայաստանի ու Արցախի մէջ զօրակոչ է յայտարարուած: Մենք եւս մեր կարգին, հայրական կոչ կ'ուղղենք իւրաքանչիւր հայու ընդառաջելու համահայկական զօրակոչին՝ ինքզինք նկատելով Հայաստանի ու Արցախի պաշտպանութեան զինուոր: Կոչ կ'ուղղենք նաեւ մեր բոլոր թեմերուն, կազմակերպութիւններուն, ընտանիքներուն ու զաւակներուն, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին ճամբով իրենց օժանդակութիւնը բերելու հայոց բանակի ու Արցախի հզօրացման:

Մեր ջերմ թելադրութիւնն է միանգամայն, որ մեր աղօթքներուն մէջ յիշենք հայրենիքի պաշտպանութեան ու հայ ժողովուրդի յաւերժութեան համար իրենց արիւնը թափելու պատրաստ մեր զինուորները: Հայցենք Բարձրեալն Աստուծմէ, որ շուտափոյթ ապաքինում պարգեւէ մեր վիրաւոր զինուորներուն ու հայորդիներուն, լուսաւորէ հոգիները նահատակ զինուորներուն եւ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Արցախը, Հայաստանը եւ մեր համայն ազգը:

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական սիրով՝

**Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
29 Սեպտեմբեր 2020
Անթիլիաս, Լիբանան**

միջազգային անվտանգութեանն ու կայունութեանը:

Միջազգային հանրութեանը կոչ եմ անում՝ գործադրել ազդեցութեան բոլոր լծակները՝ գերծ պահելու Թուրքիային հնարաւոր բոլոր միջամտութիւններից, ինչը վերջնականապէս կ'ապակայունացնի իրավիճակը տարածաշրջանում: Թուրքիայի յարձակողական վարքագիծը, որը խիստ վտանգաւոր դրսեւորում ունեցաւ յատկապէս յուլիսեան դէպքերի ժամանակ եւ շարունակուում է այսօր, լուրջ մտահոգութեան տեղիք է տալիս: Թուրքիայի նման վտանգաւոր կեցուածքի պահպանումը ամենակործանարար հետեւանքներով է յղի Հարաւային Կովկասի եւ յարակից տարածաշրջանների համար: Միջազգային հանրութիւնը պետք է միասնական ջանքերով կանխի դէպքերի վտանգաւոր զարգացումը եւ տարածաշրջանը գերծ պահի ապակայունացնելու բոլոր փորձերից:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր մենք կանգնած ենք լուրջ վտանգի առաջ: Իրավիճակը անելի է բարդանում է համավարակի պայմաններում: Ուստի պահի լրջութիւնը պահանջում է մեր բոլորի զգօնութիւնը: Մեր յաղթանակը կախուած է մեզկից իւրաքանչիւրի անհատական եւ մեր միասնական, հաւաքական ջանքից եւ պահուածքից:

Կոչ եմ անում բոլորին ցուցաբերել բարձրագոյն աստիճանի կարգապահութիւն եւ բարձր քաղաքացիական գիտակցութիւն: Եւ մենք կը յաղթենք:

Եւ ուրեմն՝

Կեցցէ ազատութիւնը,

Կեցցէ Հայաստանի Հանրապետութիւնը,

Կեցցէ Արցախի Հանրապետութիւնը,

Կեցցենք մենք եւ մեր երեխաները, որ ապրելու ենք ազատ եւ երջանիկ Հայաստանում, ազատ եւ երջանիկ Արցախում:

Փառք հայոց բանակին:

Յաւերժ փառք հայ զինուորին»:


ԱՐԴԱՐ ՊԱՅԱՆՁ

ՉՈՅԳ ԲՈՒՆՅՔՈՎ՝
ԸՆԴԴԵՍ ՈՃՐԱԳՈՐԾ
ՉՈՅԳԻՆ



Ս. Սահտրճեան

27 Սեպտեմբեր 2020-ը նորագոյն կարմիր թուականն է հայ-թուրքեւագերիական հակամարտութեան տարեգրութեան մէջ: Կանուխ առաւօտուն, ազերիական բանակը յարձակման անցաւ Արցախի ճակատին երկայնքին: Երբ այս տողերը կ'արձանագրենք պատերազմական գործողութեանց երկրորդ օրուան վախճանին (Յայաստանի ժամանակացոյցով), անորոշ կը մնայ թէ յարձակումը որքա՞ն պիտի շարունակուի, պիտի տարածուի՞ նաեւ Յայաստանի սահմանին վրայ (նախանշաններ արձանագրուեցան), սակայն մէկ բան յստակ է. սա մամեն ծաւալու եւ վարագ յարձակումն է 1994-ի զինադադարէն ի վեր, կը սպառնայ շուրջ մէջ ձգել 2016-ի Ապրիլեան Պատերազմը, մանաւանդ, որ թրքական ուժեր եւս ուղղակի եւ անուղղակի միջոցներով մասնակից են յարձակումին, Թուրքիոյ կողմէ հովանաւորուած ու մարզուած ահաբեկչական խմբաւորումներ նետուած են Արցախը պաշտանողներուն դէմ, տագնապին տալով աննախընթաց տարածք (յամենայնդէպս, Պաքուի կողքին կանգնելու Անգարայի խօսքն ու գործը աննախընթաց չեն): Իսկ մեր անմնացորդ մաղթանքն է, որ պատերազմը դադրի անյապար:



Ազերիական յարձակումը յայտնապէս սպասելի էր եւ, ըստ Յայաստանի ու Արցախի պաշտօնական հաղորդումներուն (որոնք վստահելի գլխաւոր աղբիւրներն են, հեռու՝ ազերիական յերիւրանքներն եւ անոնց արձագանգող՝ թրքական յոխորտանքներն), ստացած է ուժեղ հակահարուած: Պատերազմ է. նման տարածքով ու սաստկութեամբ պատերազմ մը բնականաբար պիտի խլէ զոհ ու վիրաւոր, պիտի ըլլան դիրքերու գրաւում ու ազատագրում, աւերումներ: Նախընթացները տարբեր չէին: Յայկական կողմին համար, կայ միայն մէկ ընտրանք. ետ մղել յարձակումը եւ յաղթանակել: Այս նպատակին մէջ չկայ երկու կարծիք: Ժամը ժամին դէպքերուն ու անոնց արձագանգներուն հետեւողներս տեսանք, որ ինչպէ՛ս, ակնթարթային միաձայնութիւն ստեղծուեցաւ հայութեան ողջ երկնակամարին տակ, շոգիացան իշխանութիւն-ընդդիմադիր հակասութիւններն ու հակաճառութիւնները, մէկ հայրենիք, մէկ ժողովուրդ եւ պիտի յաղթանակենք արտայայտութիւնները հրապարակը հակաենթեցին նախընթաց փուլի բոլոր հակադրութիւններէն: Տարբեր ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ Երտողաններուն ու Ալիեւներուն աչքին, Յայաստանի մէջ չկան յեղափոխականներ ու հակաֵյեղափոխականներ, չկան հիներ ու նորեր, այլ անոնք Յայաստանն ու Արցախը, ողջ հայութեան հետ, կը դիտեն իբրեւ բնաշնչելի տարրեր՝ ի խնդիր համաթուրանական հին երագին իրականացման: (Եւ անշուշտ հարց է, թէ հայկական նման միասնութիւն ինչո՞ւ պէտք է սպասեր թշնամիին ստեղծած օրհասական կացութեան, որպէսզի տեսնուի, որ քաղաքական հակադրութիւնները, ներ-հայկական, ներ-կուսակցական եւ նման չափազանցեալ հակամարտութիւնները որքա՞ն սին են եւ անվաղորդայն...):

Աւելորդ կը նկատենք այս սինակին մէջ անդրադառնալ դէպքերու շղթայագերծման ու գարգացման մանրամասնութիւններուն, թէեւ իւրաքանչիւր վայրկեանը կարելոր է ու ճակատագրական. ընթերցողը վստահաբար ակնդետ կը հետեւի իւրաքանչիւր դէպքի, յարձակումի, պաշտպանողականի եւ հետեւանքներուն մասին տրուած տեղեկութիւններուն: (Այս տողերը ընթերցողին հասնելու պահուն, բազում նորութիւններ արձանագրուած պիտի ըլլան): Այսուամենայնիւ, կ'արժէ արձանագրել դէպքերէն բխած ու ընդհանուր տրամադրութիւնները, միացեալ կամքի արտայայտութիւնը եղող իրականութիւններ, որոնք նաեւ ուղեցոյց են բոլորիս:

Առաջին հերթին, ողջ հայութիւնը՝ պետական կառոյցներով, կամաւորական գունդերով, կազմակերպութիւններով ու միութիւններով, ժողովուրդի բոլոր խաւերով՝ միահամուռ կերպով կանգնեցաւ ու կը կանգնի քանի մը հարիւր քիլոմետրի վրայ երկարող ճակատը պաշտպանող, իրարայաջորդ յարձակումները ետ մղող մեր հրաշագործ զինուորներուն կողքին: Արցախի նախագահին իսկ հաստատումով, յարձակողականը կը տարածուի Օմարի լեռնանցքէն (Արցախի հիւսիսը) մինչեւ Ֆիզուլիի շրջանը, մինչեւ Արաքս գետի սահմանները (հարաւը), անցնելով Մարտակերտէն, Մարտունիէն եւ այլ սահմանամերձ անտառներ ու դիրքեր: Ռազմաճակատէն հեռու, ռմբակոծուած են Ստեփանակերտը, Մարտունին եւ այլ բնակավայրեր, ուր կան քաղաքային գոհեր, վիրաւորներ՝ կին, մանուկ եւ տարեցներ (եւ թող մէկը չըսէ, թէ սա պատերազմական ոճիր չէ), նաեւ՝ նիւթական հսկայական վնասներ: Այլ խօսքով, Ալիեւի Ատրպէյճանը եւ Երտողանի Թուրքիան, ձեռք ձեռքի տուած, գործադրութեան կը դնեն հայութիւնը ահաբեկելու իրենց ծրագիրը, սպառնալիքներու փուլը կը ձգեն

իրենց ետին եւ ՆԱԽԱՅԱՐՁԱԿ կը դառնան: Արցախի դէմ նետուած է Ատրպէյճանի ամբողջ զինուժը՝ իր օդային, հրասայլային ու ցամաքային կարողութիւններով: Մանրամասնութիւն մըն է այն, որ յառաջապահ գիծերուն վրայ հայութեան դէմ արձակուած են թալիշներ եւ այլ փոքրամասնութեանց զաւակներ, որոնց կողքին, վարձկան ծայրայեղականներ ժամանակ չեն կորսնցներ... ազերիական գիւղեր կողոպտելով ու իբրեւ թէ իսլամական օրէնքներ պարտադրելով: Վերջնականապէս վար առնուած է Թուրքիոյ դիմակը. «Եղբայր Ատրպէյճան»-ին տրամադրուած աջակցութիւնը լոկ բարոյական ու խորհրդատուական չէ, այլ նաեւ զինական-զինուորական:

Յստակ է նաեւ, որ հայկական կողմը՝ մեր բանակը աննախընթաց պատրաստութեամբ կը դիմագրաւէ այս յարձակումը: Ամիսներ տեւած՝ Թուրքիոյ ու Ատրպէյճանի սպառնալիքները, ապա նաեւ՝ Նախիջեւանի մէջ վերջերս կազմակերպուած միացեալ ռազմափորձերը, Իսրայէլի մէջ Յայաստանի դեսպանատան բացումէն առաջ (հաւանաբար նաեւ վերջ) ապահովուած զինական կազմաձեւերը եւ բազում ցուցանիշներ պարզ դարձուցած էին, որ թուրքեւագերիական դաւադրութիւնը պիտի իրականանար: Պետական ու զինուորական պատասխանատուներ ճիշդ նշումներ ըրին, յայտարարելով, որ սա մէկ օրէն միւսը իրականացած յարձակողական չէ, չի կրնար ըլլալ (իբրեւ թէ) հակադրութիւն՝ հայկական կողմի ոտնձգութիւններուն, որովհետեւ նման լայնածաւալ յարձակողական մը կը կարօտի երկարատեւ պատրաստութեան, աւելի՛ն, յարձակողական ծանր զէնքերու լիարժէք օգտագործումը, ինքնին, կը հերքէ ազերիական այն մեղադրանքները, թէ հայկական կողմն է եղած նախադրականը: Եւ ահա, արցախեան բանակին ու անոր թիկունք կանգնող կամաւորներուն, Նոյնինքն Յայաստանին ու ողջ Սփիւռքի միացեալ ճակատը արժանի հակահարուածը կու տայ ՆԱԽԱՅԱՐՁԱԿ ռազմատեսչերուն: Մեր նոր նահատակները իրենց արիւնքով ու կեանքով կը վկայեն, որ Արցախեան Յերոսամարտերուն անմահացած զոհերը կ'ապրին իրենց մէջ, անոնց բարձրացուցած դրօշը գետին պիտի չիյնայ, որքան ալ մեծ ըլլայ արեան ու նիւթական տուրքը: Նահատակ տուած ընտանիքի հայրը ճակատ կը վագէ հայրենիքին պաշտպան կանգնելու համար: Եւ որքա՞ն դիպուկ էր տարեց կամաւորի մը մէկ արտայայտութիւնը. «Մէկ զինուոր իսկ զոհ պիտի չտանք, միասին ճակատ կ'երթանք ու միասին պիտի վերադառնանք...»: Ասոր՝ արցախցի հայը կ'արձագանգէր փողոցէն կամ ապաստանարանէն. «Խուճապ չկայ: Մենք մեր տունն ու հողը լքող չենք...»

Ազերիական զինուժը խորտակող Արցախի բանակն ու անոր կողքին կանգնողներս կը կազմենք հայութեան գոյգ բռնուցքներէն առաջինը, որովհետեւ Արցախի հողերուն իւրաքանչիւր հիւլէին պաշտպանութիւնը վճռորոշ դեր ունի մեր պայքարի ելքին հետ, Արցախի պաշտպանութիւն՝ կը նշանակէ Յայաստանի պաշտպանութիւն, Արցախ-Յայաստանի պաշտպանութիւն՝ կը նշանակէ Սփիւռքի պաշտպանութիւն: Իսկ ունեցածդ պաշտպանելու անդին, կան տակաւին... բռնագրաւեալ Գետաշէններն ու Նախիջեւանը, Արեւմտեան Յայաստանը:

Յայութեան երկրորդ բռնուցքը՝ ընդդէմ Թուրքիա-Ատրպէյճան ոճրագործ գոյգին, կը կազմեն քաղաքական ու դիւանագիտական աշխատանքները, որոնց անբաժանելի մասնիկներն են տեղեկատուութիւնն ու ճշմարիտ քարոզչութիւնը: Այս գետնի վրայ եւս, Յայաստան ու Արցախ լծուած են լայն տարածքով աշխատանքի, իրենց կողքին ունենալով ամբողջ Սփիւռքը: Այս ծիրին մէջ, աշխատանքը ունի երկու գլխաւոր խորագիր. նախ, ցուցադրել Թուրքիոյ եւ Ատրպէյճանի սուտերը, ապացուցել, թէ ո՞վ է նախադրականը (ի դէպ, որեւէ շահագրգիռ կողմի համար այլապէս յստակ է, պէ՛տք է ըլլայ թէ ո՞վ է նախադրականը: Անոնց տեղեկատուական եւ հետախուզական միջոցները հաւանաբար պէտք չունին հայկական կողմին տրամադրելիք տեղեկագիրներուն), ապա նաեւ նոր յառաջխաղացք արձանագրել Արցախի ու Յայաստանի արդար Դատին «ռազմադաշտին» մէջ:

Ատրպէյճանի յարձակումը 27 Սեպտեմբերի առաւօտուն իսկ առաջնակարգ տեղ գրաւեց միջազգային լրատու աղբիւններու հաղորդումներուն ու մեկնաբանութիւններուն մէջ: Գրեթէ միաձայնութիւն կը տիրէր այն կետին շուրջ, թէ Ազրպէյճանն է նախադրականը, սակայն մեկնաբանութիւններն ու արձագանգները Նոյնքան ուղղամիտ չէղան: Իրարու յաջորդեցին իսկապէս բարեմիտ կոչեր, թէ՛ ռազմական գործողութիւնները պէտք է դադարեցուին, զէնքի ուժով լուծուի չ'ըլլար (սա յստակ պատգամ էր թուրք-ազերիական խունթային), սակայն շատեր գինիին շուր խառնեցին՝ հակադիր կողմերը դիտելով համահաւասարի ակնոցով, այսինքն՝ կոչերուն շէշտը համագոր հնչեղութեամբ ուղղեցին հայկական ու ազերիական կողմերուն: 28 Սեպտեմբերին, յայտարարուեցաւ, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը որոշած է 29 Սեպտեմբերին յատուկ նիստ մը գումարել վերստին բորբոքած տագնապին համար, առաջնահերթ նպատակ ունենալով վերջ տալ ռազմական գործողութեանը:

Մարգարէ ըլլալու պէտք չկայ, թէ Թուրքիա եւ Ատրպէյճան ինչպիսի յերիւրանքներով պիտի փորձեն մոլորեցնել աշխարհի կարծիքը (թէեւ, կրկնենք, Ապահովութեան Խորհուրդի իւրաքանչիւր անդամն ու այլ շահագրգիռ կողմեր շատ լաւ գիտեն իրականութիւնը): ՄԱԿի այս նիստն ու անոր ընծայած բեմը առաջին կարելոր փորձաքարը պիտի ըլլան, թէ հայութեան երկրորդ բռնուցքը ինչպիսի հակահարուած պիտի տայ ոճրագործ գոյգին, որքա՞ն պիտի ստիպէ, որ կեղծիքն ու դիմակները մեկդի ձգուին:

ՄԱԿը միակ բեմը չէ, ուր հայութեան քաղաքական ու դիւանագիտական մեքենան իր ուժերը պիտի լարէ ու ցուցադրէ

Ռուբեն Սեւակ-135 (2.)



Լալա Միսկարեան-Մինասեան

**Երբ սերն ի յաշխարս եկաւ, եկաւ իմ սիրտս բնակեցաւ.
Հապա յիմ սրտես ի դուրս՝ յերկրէ յերկիր բնակեցաւ.
Եկաւ ի գլուխս եկաւ, ի ըղէղս եկաւ թառեցաւ:
Աչիցս արտասուք ուզեց, նա արին ի վար վաթեցաւ:**

Նահապետ Զուլակ

«Սիրոյ գիրքը» Ռուբեն Սեւակի ներանձնական՝ նուրբ, հարուստ ու գեղեցիկ աշխարհը կը բացայայտէ: Բաղդատած «Քանոս», «Կարմիր Գիրք» հատորներու, հոս, Նիւթին հետ, կը փոխուին նաեւ գրելու ոճը, շունչը:



Չարիքի ու կեղծիքի դէմ անոր գայրոյթի, ընդվզումի, նոյնիսկ ատելութեան տրամադրութիւններուն կու գան փոխարինելու նուրբ, ներդաշնակ ու բազմաշերտ հոգեկան ապրումներու անկեղծ ու խանդավառ պատկերներ: Այս Նիւթին մէջ Սեւակ ինք է ամբողջութեամբ:

Կարծիք կայ, թէ ժամանակակից արեւմտահայ բանաստեղծներու մէջ ան կը յատկանշուի իր իւրօրինակ սիրերգութեամբ: Բնականօրէն՝ իւրաքանչիւր իրա՛ւ բանաստեղծ իւրօրինակ է եւ նոյն Նիւթին կը մօտենայ միայն իրենյատուկ կերպով: Մեծարեցնիս երգած սերը այնքան նուրբ ու վերերկրային է, որ անելի երագի աշխարհի կը վերաբերի: Սիւսմանթոս մերժեց ձեռք գարնել սիրոյ քնարին, այնքան ատեն որ հայրենիքը

կ'արիւնահոսեր: Վարուժանին քով սիրոյ զգացումը մարդու հոգեկան աշխարհը ամբողջացնելու, գեղեցիկ գաղափարը հաստատելու միջոց է: Թեքեան տակաւին չէր գրուած իր բարձունքները: Սեւակ սիրերգակ է ըստ իր եութեան: «Զերթողը» քերթուածին մէջ բանաստեղծը կը խոստովանի, որ ինք քերթող է շնորհիւ Սիրոյ ու սիրած եակի՝

.....
**Ո՛հ, ես քերթող եմ. քնարի մը պէս
Հրճուանքէ մատիս տակ կը նուագես,
Շրթունքդ կ'այրի համբոյր- կրակես,
Ու կը գինովնամ ձայնէդ հրակէզ,
Քերթո՛ղ եմ աղուո՛ր, գայն կը պարտիմ քեզ...**

Անոր քնարը սիրած կնոջ մարմինն է, ու երգած սերը միանգամայն երկրային է, որ կրնայ հարազատ ըլլալ իւրաքանչիւրին՝ իր հրճուանքներով ու նաեւ՝ ցաւով: Սեւակ բժիշկ էր, եւ մարդկային մարմինը իրեն համար գաղտնիքներ ու արգելքներ չունէր, Սեւակ բանաստեղծ էր, ու մարդկային հոգին իր մշտական արպտումներու դաշտն էր: Այս երկուքին դաշնութիւնը կը ծնէր երիտասարդական թարմ, անկեղծ ու ապրուած զգացումներ:

Քերթողութեամբ Սեւակին հոգեհարազատ գրչեղբայր Տերեան կը մրմնջէր. «Եթէ սեր չկայ, ինչի՞ համար պիտի ապրեմ այս չար աշխարհում...», իսկ Իսահակեան կ'ըսէր. «Կեանքս կը տամ սրտից բխած համբոյրին, ա՛խ թէ մէկը ինձ հասկանա՛ր ու սիրէ՛ր»: Եւ այսպէս՝ բանաստեղծները միշտ անկաշառ, անկեղծ սիրոյ կարօտը ունին: Սեւակին համար եւս սերը տիեզերքը լեցնողն ու կեանքը իմաստաւորողն է. «Սակայն անաղ անսեր կեանքին: -Կեա՛նք է որ...» կը մրմնջէ ու պատրաստ է սիրոյ համար տալ կեանքը.

**Կ'ուզեմ մեռնիլ դիւցազնային
Սիրոյ մ' համար աղջկայ,
Յետոյ աչերս վար կը նային՝
Ո՛ր է այն Սերն, ա՛խ, չկայ...**

Մարդու կեանքը կատարելապէս ներդաշնակ, իմաստալից, գեղեցիկ ու արժանաւոր դառնալու համար Սեւակ կը նշէ երեք գերագոյն քաղաքիչներ՝ Սեր, Իտեալ, Հոգի.

**Դուն որ Սերն ես ու Իտեալն ես ու Հոգին,
Ու ինչ որ կայ ամենէն վեհ ու մաքուր,
Ու ինչ որ կայ լացքնող մեր ախտագին
Սրտին հազար հիւսկենները թաքթաքուր,
Դուն որ Սերն ես ու Իտեալն ես, ու Հոգին...**

Սեւակի սիրոյ երգերուն մէջ մահուան գաղափարը մշտական ներկայութիւն է: «Մահագգացում», «Գացող Մարդը», «Երեք Ձիւղորներ», «Սիրոյ եւ Մահուան Երգը», «Սիրոյ Ծարաւ» եւ ուրիշ շատ քերթուածներու մէջ ան մահուան հարցը կը դնէ: Անկախ հայոց ջարդերու բերած տրամադրութիւններէն, Սեւակ բժիշկ էր ու թոքախտաւորներու մահը իր կեանքին ամենօրեայ իրողութիւնն էր: Այդ Նիւթին կապուած անոր խորհրդածութիւնները կը յայտնուին եւ քերթուածներու ձեւով, եւ «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» արձակ հատորին մէջ: Սեւակ խորհող, վերլուծող

միտք ունի ու մահուան իրողութիւնը անոր համար նաեւ կեանքին իմաստը առաւել խորացնելու նպատակ ունի: Ան փիլիսոփայօրէն կը մօտենայ կեանքին, որ ցաւով լի է ու ցաւերու դարմանը Սերը միայն կրնայ ըլլալ: Ան կ'ուզէ սիրոյ ընդմէջէն երթալ մահուան, սերը՝ որպէս գերագոյն ամոքիչ կեանքի ունայնութեան ու անխուսափելի մահուան: Բոլոր ժամանակներուն մարդը յուզած այս Նիւթը տարբեր ձեւերով կը գտնենք հայ բանաստեղծներու քով: Թումանեանի Անուշի ու Սարոյի սերը սիրահարներու մահէն ետք տիեզերքին մէջ կ'անմահանայ: Վարուժանի «Հարճը» վիպերգի հերոսուհին՝ Նագենիկ, սիրածի գիրկին մէջ իր մահը կը գտնէ, սակայն անոր հոգին բարտիի ծառին մէջ կ'ապրի դար մը: Սերն է որ կ'ապրի՝ հակառակ չարին:

Սեւակ սիրոյ զգացումին տարբեր երանգները կ'երգէ՝ երագանք, կարօտ, սպասում, յուսահատութիւն ու նաեւ՝ վայելք: Կինը իր խորհրդաւորութեամբ կը հմայէ բանաստեղծը.

**Ահա գերին եմ հպումիդ.
Սեւ աչքերուդ մութը բոլոր,
Չիս կը վարե քայլամուրդ...
Ո՛ւր, ո՛ւր այսպէս, ահե՛ղ ժպիտ...**

Ու սակայն կինը ճանչնալ փորձող բանաստեղծին ան կը թուի ըլլալ խիստ հակասական էակ, որ սիրոյ արբեցումին հետ միասին նաեւ անտարբերութեան «մոռացութեան անդունդը» ունի՝

**Ո՛վ կնոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով
Ու կեղծիքով հրաշակերտուած սի՛րտ աղուոր,
Ուր կարկաչող սիրոյ չքնա՛ղ ակին քով՝
Մոռացութեան անդո՛ւնդ կայ ահաւոր...**

Սիրոյ զգացումը Սեւակին մէջ լիարժէք է: Ան չի վարանիր սիրոյ արբեցումը ամբողջացնող՝ մարմնական վայելքի նկարագրութենէն: Իր ստեղծագործական շրջանին արեւմտահայ քերթողութեան մէջ ի յայտ եկաւ «հեթանոսական» շարժումը, որմէ տարբեր չափերով ազդուեցան մեր բանաստեղծները, երբեմն երթալով գեղեցկութեան ու տգեղ մարմնական նկարագրութիւններու: Այս առիթով Սեւակի մասին Արմէն Սեւան գրած է.

«...իր մօտ իրապաշտի վրձինը անելի ճիշդ հարուածներ ունի եւ զգացումի տարրը անելի անկեղծ ակէ մը կու գայ, որով՝ հանդուրժելի կ'ըլլայ ու անելի վեր կը կանգնի քան իր նախորդները՝ Վոսփորի Ափին»: «Հեթանոս» բանաստեղծները գեղեցկութիւնը կը տեսնէին մարդու հոգեկան ու մարմնական ներդաշնակութեան մէջ, իսկ կինը մշտական գեղեցկութիւն էր, ներշնչումի աղբիւր, կեանքի նորոգութեան, փթթումի ու շարունակութեան խորհրդանիշ: «Հեթանոսական» շարժումին գագաթնային արտայայտութիւնը ու կատարելութիւնը, անտարակոյտ, Կարուժանի «Հեթանոս Երգեր»ն էր: Սեւակ եւս գեղեցկութիւններ կը տեսնէ կնոջ մարմնի ու ամողջ սիրոյ մէջ՝ ի հակադրութիւն ծախու սերերու երեւոյթին, որ խախտած է մարդու հոգեկան ներդաշնակութիւնը: Տերեան այս երեւոյթին համար կ'ըսէր՝ «Ա՛խ, ոսկով ես գնում քեզ, անհաս ցնորք իմ հոգու»: «Գինով Սեր», Ովսաննա...», Զնացող Աջիկը», «Ահա Կ'երգես, Դասիանա» եւ այլ քերթուածներ կնոջ գեղեցկութեան հանդէպ Սեւակի սիրոյ ջերմ ու անկեղծ վկայութիւններն են: «Երգ-Երգոց»ին ամառին համարներուն մէջ սիրած կինը Դուրեանի կամ Մեծարեցնի ոգիով՝ նուրբ ու վերերկրային պատկերներով կը ներկայանայ բանաստեղծին՝

**Երա՛գ. տեսի՛լ, անգոյ ստուէ՛ր մ' անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՛ղ մը տարտամ:
Զմայապաշտ ծաղի՛կ մ' արդէօք ցնորքի,
Զու մշուշոտ գիծերուդ ի՛նչ անուն տամ.**

Սակայն յաջորդող համարներուն մէջ գեղուհին հետգիտէ մարմին կ'առնէ եւ կը ներկայանայ որպէս սիրոյ վայելքի մարմնացում ու բանաստեղծի պաշտամունքի էակ՝

**Իգո՛ւր: Հոգիս թաղուիլ կ'ուզէ յուլօրէն
Ստինքներուդ մտերմութեանը մէջ կոյս.
Ու անութիդ որոջ ծալքերը նորէն
Գիտեմ որ գիս պիտի տանջեն մինչեւ լոյս...**


Եւ ինչո՞ւ գայթակղիլ այս «բաց» նկարագրութենէն, երբ տակաւին 16-րդ դարուն ապրած իր գրչեղբոր՝ մեր հրաշալի սիրերգակ Զուլակի նոյնանման ու անելի գայթակղիչ հայրենները մենք կ'ընթերցենք հաճոյքով:

Սեւակի սիրերգութեան ամենէն նուրբ ու նաեւ խոր քերթուածներէն է «Ինչո՞ւ»ն: Կը թուի, թէ գաղափարը մէկ է ու կ'ամբողջանայ առաջին համարէն իսկ, սակայն յաջորդող իւրաքանչիւր համար կը խորացնէ գայն եւ զգացական ու մտային ալեկոծութեան մէջ կը դնէ ընթերցողը: Կան սիրային քերթուածներ, որոնք որոջ տարիքի մը կը յուզեն, ու հասուն տարիքի միայն հին յուզումը կը յիշեցնեն: Կան նաեւ քերթուածներ, որոնք խորութեան կ'անդրադառնան հասունացումի աստիճաններով բարձրացումիդ հետ, երբ ան տակաւին ըսելիք ունի քեզ: «Ինչո՞ւ» քերթուածը տարիք չունի: Հոն միտքը այնպէս միաձուլուած է զգացումին, որ իւրաքանչիւր ընթերցումիդ թախծոտ ջերմութեամբ կ'ողողէ հոգիդ ու անվերջ կը բացայայտես անոր բազմաշերտութիւնը: Այսպէս՝ համար առ համար.

Միտքով ու հոգիով հասուն բանաստեղծը տագնապ, նաեւ կարեկցանք կը զգայ տակաւին կեանքին աչքերը նոր բացող աղջկան հանդէպ ու նաեւ՝ պատասխանատուութիւն, որ անոր մէջ սեր արթնցուցած է: «Փոքրիկ Աղջիկը» սովորական մարդոց սովորական համակրութենէն վեր զգացումի մը կը ձգտի, մինչդեռ բանաստեղծը «ծեր արծիւ» մըն է, անոր հոգին

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ

ՄՆԱՅՈՒՆ
ՅԱՐՅ



ԿՐԵՑ-ԱՐՄԵՆ

Երբ հայու մը հարց կու տաս, թէ ի՞նչ ազգի կը պատկանի, սովորաբար, առանց վարանելու կը պատասխանէ «հայ եմ»: Խօսքս չի վերաբերիր ի՞նչ-ի՞նչ պատճառներով հայութենէն հեռացած մարդոց:

Երբ օտարներուն նոյն հարցը կ'ուզես տալ, նախ դուն կը վարանիս, թէ ի՞նչ պետք է հարցնես: «Ազգ» (nation) եւ «ազգութիւն» (nationality, nationality) տարբեր իմաստներ ունին բայց նաեւ յաճախ կը շփոթուին, մէկը միւսին տեղ կը հասկցուի եւ ստիպուած կ'ըլլաս ուրիշ եզրերու դիմելու:

Այսպէս, հարցո՞րք քանատացիի մը, թէ ի՞նչ ազգութեան կը պատկանի, ան այդ բառով, իր լեզուով, կը հասկնայ ի՞նչ քաղաքացիութիւն ունի, եւ կը պատասխանէ «քանատացի»: Իսկ եթէ ուզես իր ազգային ծագումը գիտնալ, քանի որ «քանատացի ազգ» գոյութիւն չունի, գէթ տակաւին գոյութիւն չունի, ապա պիտի հարցնես «ի՞նչ էրնիկ ծագում (origine ethnique, ethnic origin) ունի», այն ատեն գրեթէ իւրաքանչիւրը պիտի տայ իրեն յատուկ պատասխանը՝ ֆրանսական, անգլիական, յունական, իտալական, լիբանանեան, բնիկ եւ այլն:

Հետաքրքրական է այս երեւոյթը:

Հետաքրքրական է, որովհետեւ բացի բնիկներէն եւ անգլիական ու ֆրանսական ծագում ունեցողներէն, որոնք ընդհանրապէս պահած են իրենց լեզուն (յաճախ ալ չեն պահած, մանաւանդ բնիկները, ծուլուած են մէկը միւսին մէջ), միւսները, մեծ մասամբ, քանի մը սերունդ ետք այլեւս դադարած են զայն գործածելէ, նոյնիսկ չեն կրնար զայն խօսիլ, կարդալ ու գրել, սակայն ունին պատմական յիշողութիւնը իրենց ծագման:



Այդ յիշողութիւնը անպայման կապ չունի իրենց նախահայրերուն հանդէպ որքէն զգացումի, իրենց ծագման նկատմամբ որքէն հպարտութեան կամ հաւատարմութեան հետ: Ըսեմ՝ ընդհանրապէս: Սակայն այդ ազգային ծագումը չէ՛ մոռցուած, մանաւանդ երբ մականունն ալ պահպանուած է: Յաճախ այդ ալ փոխուած է, թարգմանուած է կամ նմանակուած, սակայն բան մը մնացած է, որ չէ մոռցուած:

Այդ կապը կրնայ ժառանգութիւն մը ըլլալ (աւետարան մը, զգեստ մը, լուսանկար մը), կրնայ անանդութիւն մը ըլլալ, մանաւանդ հաւատքի կամ հաւատալիքի առնչուած, կրնայ նաեւ մշակութային բնոյթի ըլլալ, ինչպէս որոշ ուտեստներ, ինչպէս Չատկուան հաւկիթներու իւրայատուկ գունաւորումը եւ այլն:

Սակայն անոնք բոլորը՝ այդ գանատացիները, դուրսը, արտասահմանի մէջ, իրենք-զիրենք կը ներկայացնեն իբր գանատացի:

Արդեօք նոյնը չէ՞ հայերու պարագային ալ: Ուրիշներուն համար Լիբանանէն եկող հայերը, գաղթական թէ զբօսաշրջիկ, կը մտնեն լիբանանցիներու դասաւորման մէջ եւ պաշտօնական իրավիճակներու մէջ այդպէս ալ կը ճանչցուին: Իրենց հայ կամ տիւրքի ըլլալը չի՛ հետաքրքրեր մաքսատան պաշտօնեան կամ դատաւորը: Լիբանանցի են, սուրիացի, յոյն կամ պուլկարացի՝ նոյնիսկ եթէ «եան»-ը փակած է իրենց մականունին, նոյնիսկ եթէ 100 առ հարիւր հայ կը զգան:

Յետոյ, յաջորդ սերունդներուն համար այդ «հայ զգալու» իրավիճակը հետզհետէ կը փոխարինուի նախ գանատացի ըլլալու զգացումով, եւ ինչպէս միւս ազգութիւններու պարագային, հայ ըլլալը, հայ եղած ըլլալը կ'երթայ մնալու միայն ենթագիտակցութեան մէջ:

Որոշ ազգակներ կը դանդաղեցնեն այդ փոխարինումը, ուրիշներ՝ կ'արագացնեն, սակայն չեն կասեցներ: Հայկական ուսում ստացած ըլլալը կամ չըլլալը, հայ կեանքին մասնակից ըլլալը կամ չըլլալը, ազգակիցի մը հետ ամուսնացած ըլլալը կամ չըլլալը, Հայաստանի հետ առնչուիլը կամ չառնչուիլը եւ այլն:

Պնդողներ կան, թէ հայերը պետք է հպարտ զգան իրենց հայկական ծագումով, մանաւանդ հպարտ՝ ազգի ներկայ նուաճումներով, որպէսզի մասն կառչած իրենց արմատներուն:

Կրնանք հարց տալ, թէ արդեօք այդ հպարտութենէն զուրկ են միւսները, այդ գանատացիները, անտորալիացիները, ամերիկացիները, պրագիլիացիները եւ մասամբ նորին, որոնք մեզմէ աւելի հզօր եղած՝ քանակային իմաստով հզօր, քաղաքակրթութեան զարգացման մէջ մեզմէ աւելի պատկառելի ներդրում ունեցած, հպարտ ըլլալու մեզմէ բազմապատիկ աւելի պատճառներ կամ պատրուակներ վայելող ազգերու ժառանգորդներն են՝ Նոր աշխարհի այդ բնակիչները, նոյնիսկ Հին աշխարհի նորահաստատ բնակիչները, որոնք աւելի հաւատարիմ են իրենց նոր քաղաքացիութեան քան իրենց ծագման:

Մարդկային այս պարզ իրականութիւնը կամ իրողութիւնը պետք չէ անտեսելը, երբ մեր ազգի ապագային մասին կը մտածենք:

Ազգի եւ ազգութեան հասկացութիւնները համեմատաբար նոր գարգացումներ են մարդկութեան պատմութեան մէջ: Անոնք յառաջացած

են մարդկային կեցութեան ու համակեցութեան յարափոփոխ պայմաններէն: Այսօր անոնց պահպանումը մեզի համար սրբութիւն-սրբոց է, քանի որ անմիջականօրէն առնչուած է մեր հաւաքական գոյութեան ու գոյատեւման հետ: Յատկապէս մեր աշխարհացրի իրավիճակին մէջ: Անհատական գոյութիւնը, անհատին կեանքը, սակայն, այլ ազգակներէ կախում ունի. ունենալ ամուր երդիք գլխուն վերեւ, կարենալ հայթայթել ամէնօրեայ մտուկ, ապահովել որակաւոր ուսում գաւակներուն, վայելել անցաւոր այս կեանքը առաւելագոյն չափով: Հայ ըլլալը չ'առնչուի այդ կարիքներուն կամ պահանջներուն, չ'աւելցնէր անոնց ապահովման հաւանականութիւնը: Անշուշտ կայ լեզուն՝ իր գեղեցկութեամբ, կայ մշակոյթը իր ճոխութեամբ, կայ պատմութիւնը իր արութեան գործերով, սակայն այդ բոլորին կարելի է ծանօթանալ ու այդ բոլորը վայելել... առանց հայ ըլլալու ալ:

Ուրե՞մս...

Հրաժարի՞նք մեր ազգային գոյամարտին: Յանձնուի՞նք պատմութեան ալիքին: Փակե՞նք մեր վարժարանները, եկեղեցիները, կեդրոնները...

Այս տողերը գրողէն չակնկալէք նման եզրակացութիւն:

Մեր մարտահրաւերը ա՛յդ է. մարդկային այդ կարիքներն ու պահանջները ինչպէ՞ս հաշտեցնել հայ ազգի ապրելու իրաւունքին հետ. բռնաբարուած իրաւունքին հետ:

Մարդկային այդ կարիքներուն ու պահանջներուն մաս կը կազմէ նաեւ իմաստալից կեանք մը ապրելու իրաւունքը:

Իմաստալից կեանք՝ անհատականէն անդին հաւաքակա՛ն նպատակներով եւ իրագործումներով հարուստ կեանք մը՝ ապահով, արդար, խաղա՛ր ու հա՛շտ աշխարհի մը մէջ:

Ըի՛շտ այս առումով է, որ հայ մարդը պիտի հասկնայ, թէ կարելո՞ր է մեր՝ ի՛ր պայքարը յանուն մեր՝ ի՛ր Դատին, կարելո՞ր ո՞չ միայն հայութեան համար այլեւ համա՛յն մարդկութեան: Բայց մանաւանդ կարելո՞ր է իրեն՝ համար, իբր մա՛րդ ապրելու համար:

Եւ ճի՛շտ այս առումով ալ է, ինչպէս կ'ըսէի այլ առիթով մը, ամէն հայ պիտի ըլլայ մարտիկ Հայ դատի: Պիտի ըլլայ մարտիկ՝ հա՛յ ըլլալու համար: Հայ մնալու՝ համար:

Այլապէս՝ ինչո՞ւ հայ ըլլալ, մնալո՞ւն հայ, վասն ինչի՞...

Ռուբէն...

Սկիզբ՝ էջ 6

բարձունքներ ու խորխորատներ կը չափագրէ, հոն կայ ապրուած ու փլուզուած անցեալ, ու ոչ՝ թիթեռի թռվում:

Յաջորդ համարը գմայլելի քնքշութեամբ կը խորացնէ բանաստեղծին ափսոսանքը: «Փոքրիկ Աղջիկ»ը աշխարհը տակաւին կ'ընկալէ որպէս կապոյտ երագ, աշխարհին նոր բացուած անոր աչքերը սիրոյ ու հրճուանքի ակնկալիքով լեցուն՝ «պալլուս երգ» են: Բանաստեղծը «սիրոյ մրմունջ»ը բաւ կը նկատէ անոր, մինչդեռ ան կեանքին Յաւը ճանչցած ու այդ ոլորտին մէջ տառապող մարդու «գուժկան մռունչը» ընտրած է:

Այնուհետեւ կը խորանայ երկու անձերու միջեւ տարբերութիւնը՝ կեանքի ցաւերու եւ անարդարութիւններու բաւիղներուն մէջ քալող բանաստեղծին առջեւ միշտ ցաւոտ «ինչու»ներուն փոթորիկը կայ: Դո՛ւն, փոքրիկ աղջիկ, անտեղեակ ես, որ սիրոյ հրճուանքին ու երջանկութեան անբաժան մասն է նաեւ ցաւը, տառապանքը, ու այդ ապրած մարդուն հետ քու մատողաշ սերդ չի կրնար «պալլուս երգ» ըլլալ:

Վերջապէս՝ բանաստեղծը իր եութեամբ մեծ ՍԵՐՆ է, հոն կը մեռնի Ես-ը, հոն սիրող երկու անձերուն համար կայ միայն Ան, եւ այդ ՍԵՐ Աստուածն է: Բանաստեղծի երագած սերը կատարեալ նուիրումն է, ուր երջանկութիւնը ու տառապանքը կը քալեն ձեռք ձեռքի: Դո՛ւն, «փոքրիկ աղջիկ», կրնա՞ս ամբողջ եութեամբդ «մեռնիլ», միաձուլուիլ այլ եութեան, որ արդէն հոգեկան կատարելութիւնն է՝ սիրոյ աստուածացումը:

Իրականութեան մէջ կատարեալ քերթուած մը վերլուծելը անշնորհակալ գործ է, քանի որ մեզմէ իւրաքանչիւրը հոն կը գտնէ ի՛ր ըսելիքը: Այդ հաճոյքը չզլանանք մեր ընթերցողին: Ահաւասիկ՝

Ինչո՞ւ, ինչու՞ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթեռ պետք էր,
Դուն ծեր արծի՛ւ մը բանտեցիր...

Կապոյտ աչուիդ երբ որ բացիր,
Կապո՞յտ աղջիկ՝ պալլուս երգ էր.
Ըե՛զ ալ սիրոյ մրմունջ պետք էր,
Դուն գուժկան մռունչս ընտրեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր,
Դամբաններ են ոտքիս հետքեր,
Ըեզ սիրոյ մեղմ սիւք մը պետք էր,
Դուն փոթորիկն կուրծքդ բացիր...

Կ'այրի՛ն աչերդ սեւածիր,
Պիտի մեռնիս, այդպէս մ'երգեր,
Ըեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն ՍԵՐ- Աստուա՛ծը սիրեցիր...

ՅՈՒՐԵՆԱԿԱՆ-ԳՈՐԱԲԱՆԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Հանդիսապատումները Բերիոյ Հայոց Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տէր Պետրոս Սրբ. Արք. Միրիաթեանի, Կիրակի, 27 Սեպտեմբեր 2020-ին, Հայ Կաթողիկէ Համայնքի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ յորելեական-գոհաբանական Ս. պատարագ Տէր Կոմիտաս Տատաղլեանի քահանայութեան 25-ամեայ արծաթեայ յորելեակին առիթով:



Պատարագին ներկայ էին ՀՀ Հալեպի գլխաւոր հիւպատոս Արմէն Սարգսեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, հայ կաթողիկէ համայնքի ներկայացուցիչներ, հայ աւետարանական համայնքի ներկայացուցիչ պատուելի Սիմոն Տէր Սահակեան, հալեպահայ մշակութային, բարեսիրական միութիւններու եւ Հայ Ծերանոցի ներկայացուցիչներ:

Պատարագը սկիզբ առաւ Թափօրով եւ Խորհուրդ Խորհին շարականով:

Օրուան պատարագին ու քարոզին եր Տէր Կոմիտաս Քիւն. Տատաղլեան:

Պատարագի ընթացքին Արհի. Տէր Պետրոս Սրբ. Արք. Միրիաթեան բարձր գնահատելով Տէր Կոմիտասին 25-ամեայ բոլորանուէր ծառայութիւնը անոր շնորհեց Աւագ Քահանայի կոչում, ապա նուիրեց

լանջախաչ, ծաղկաւոր փիղոն եւ փոխանցեց սրբազան քահանայապետ Ֆրանչիսկոս Պապին կողմէ Տէր Կոմիտասին նուիրուած առաքելական օրհնութեան գիրք:

Այս առիթով իր քարոզին մէջ Տէր Կոմիտաս Աւագ Քահանայ Տատաղլեան ըսաւ. «Աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, որ հովուէ եւ զօրացնէ զիս, որպէսզի կարենամ առաւել թափով ծառայել եւ հովուել ինձի վստահուած հօտը: Շատ գեղեցիկ գուգադիպութեամբ մը այսօր, գոհաբանական այս Ս. Պատարագը կը մատուցենք եւ հայ եկեղեցւոյ Վարագայ Ս. խաչին տօնը կը յիշատակենք: Տօն մը, որ սերտօրէն կապուած է մեր ժողովուրդին ու հայրենիքին հետ: Վարագայ խաչին տօնին յիշատակումը պահ մը մեր հայեացքը կ'ուղղէ այն սրբավայրը՝ Տոսպ գաւառի Վարագայ լէրան կողմերը, ուր երեցաւ Վարագայ խաչը: Խաչը Զրիստոսով դարձաւ անսպառ սիրոյ արտայայտութիւն: Սերը միայն վերացական զգացում չէ, այն նաեւ կեանք է ու գործ»: Տէր Կոմիտաս իր քարոզը եզրափակեց ըսելով. «Ո՛ր՛ Ք ա հ ա ն ա յ պ ե տ յ աւ ի տ ե ն ա կ ա ն, Ք ե գ ի կ ու գ ա մ ա յ օր ի ն ե ալ պ ա հ ու ս, ք ա հ ա ն ա յ ա կ ա ն Ձ եռ ն ա դ ռ ու թ ե ա ն ս 25 տարիները որպէս սիրոյ ծաղկեփունջ Ք ու սրբութեանդ խորանին նուիրելու, օրհնեալ Բաժակիդ մէջ անգին Արեանդ հետ խառնելով զայն Քեզի կ'ընծայեմ ամուր հաւատքով եւ հաստատուն յոյսով (Եւ զՔոյս Ի Քոյոցս քեզ մատուցանեմք...): Զուկդ են անոնք դարձեալ: Քեզի կը մատուցանեմ զանոնք իմ ձեռքերովս, եւ կը խնդրեմ որ օրհնես, հովանաւորես եւ արգասաբեր դարձնես հոգեւոր ծառայութեանս գալիք տարիները, որպէսզի դէպի Քեզ առաջնորդեմ ինձի յանձնուած Ք ու ոչխարները»:



Պատարագին ներկայ էին ՀՀ Հալեպի գլխաւոր հիւպատոս Արմէն Սարգսեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, հայ կաթողիկէ համայնքի ներկայացուցիչներ, հայ աւետարանական համայնքի ներկայացուցիչ պատուելի Սիմոն Տէր Սահակեան, հալեպահայ մշակութային, բարեսիրական միութիւններու եւ Հայ Ծերանոցի ներկայացուցիչներ:

Սուրբ եւ Անմահ Պատարագէն եւս հաւատացեալ ժողովուրդը ուղղուեցաւ Ազաճանեան սրահ, ուր օր. Սալբի Գասպարեան ընթերցեց



արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւագ Քահանայ Տատաղլեանի կենսագրական ու դերը հայ կաթողիկէ համայնքի եկեղեցական եւ մշակութային կեանքին մէջ:

Ապա Գերապայծառն ու Տէր Կոմիտասը շնորհաւորութիւններ ընդունեցին եւ հատեցին այս առիթով պատրաստուած կարկանդակը:



Այնուհետեւ, եկեղեցւոյ դահլիճէն ներս տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում մը, ուր ներկայ եղաւ նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան: Սրբազան հայրը շնորհաւորելով Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեանը եւ Տէր Կոմիտաս Աւագ Քահանայ Տատաղլեանը, դիտել տուաւ, որ մեր եկեղեցիները մէկ են, իսկ զոյգ համայնքներու գործակցութիւնը կը շարունակուի յանուն մեր ժողովուրդին եւ հայ եկեղեցւոյ:

Վեհան Պարսունեան

ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Ազգ. Զարեն Եփփէ Ծեմարանը 2020-2021 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի հետեւեալ պաշտօնեաներուն.

- Դաստիարակի
- Անգլերէնի ուսուցիչի
- Բնագիտութեան ուսուցիչի
- Ֆրանսերէնի ուսուցիչի
- Հայերէնի ուսուցիչի
- Մարմնամարզութեան ուսուցչուհիի
- Տնտես մայրիկի:

Ուսուցչութեան համար դիմողները անհրաժեշտ է որ ունենան սուրիական համապատասխան համալսարանական վկայական եւ կրթական ձեռնհասութեան վկայական (թափիլ դարպաւոլի) կամ աշխատանքի փորձառութիւն:

Փափաքողները կրնան ներկայանալ Ծեմարանի տնօրէնութեան ամեն օր, առաւօտեան ժամը 10:00-1:00, բացի Կիրակի օրերէն:

Ազգ. Զարեն Եփփէ Ծեմարանի Տնօրէնութիւն

Յայտարարութիւն

Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական վարժարանը 2020-2021 տարեշրջանին համար կարիքը ունի.

տնտես հայրիկի եւ տնտես մայրիկի:

Փափաքողները կրնան դիմել Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական վարժարան կամ հեռաձայնել հետեւեալ թիւին 4659530:

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ (3)

Արմենակ Եղիայեան

Վահան Փափագեան: Իր մէջ Հայաստանէն պատահիկ կը կրէր նաեւ Վահան Փափագեանը՝ «Կոմս» վերանունանեալ, որ թէեւ ծնած էր արեւմտահայ ընտանիքի մէջ՝ ի Թաւրիզ, սակայն կեանքի առաջին տասնամեակները անցուցած ու գործած էր արեւելահայ միջավայրի մէջ, ուր պիտի վերադառնար անելի ուշ եւս:

Ան կը բնակէր ճեմարանի գլխաւոր դարպասին ճիշդ դիմացը, հազիւ տասը մէթր անդին, ծառերով շրջապատուած փոքրիկ ու հանդարտ առանձնատան մը՝ առաջին յարկին վրայ, որու պատշգամբին մնայուն ու անշեղ ներկայութիւն էր այն պահերուն, ուր կ'արձակուէր աշակերտութիւնը:

Այդ ներկայութիւնը այնքան անխափան ու կանոնաւոր էր, որ մենք կը տարուէինք մտածելու, թէ ան ամբողջօրը կ'անցընէր այդտեղ կեանքի վրայ, նոյն խորհրդաւոր դիրքով՝ անշարժ արձակի մը, կարելի էր ըսել՝ մոմիայի մը պէս կանգնած՝ սպասելով արձակումը աշակերտութեան, որուն շատ կապուած էր:

Ան հանրօրէն ճանչցուած էր Կոմս անունով՝ առանց ունենալու կոմսի մը արտաքին կամ ժառանգական յատկանիշներէն եւ ոչ մէկը: Պատկերացուցէք ութսունամեայ կմախք մը, որուն վրայ կը յամենան թուփ-դեղնորակ մորթի չոփ-չոր ծուէններ, որոնք չեն կրնար կծկուիլ՝ ուրուագծելու համար թելուգ տարրական ժպիտ մը անոր դէմքին, ուր ան կը կրէր երկու անկենդան ու շուարած աչքեր:

Բոլորովին անծանօթ մնացած է ինծի անոր ծայրն ալ, քանի ոչ մէկ անգամ հանդիպած եմ խօսելուն:

Իսկ թէ ուրկէ՞ եւ ինչպէ՞ս կրցած էր ան շահիլ իր տիտղոսը՝ կը մնայ ամբողջօրեայ մը: Անոր կենսագրութիւնը կոմսութիւն թելադրող բացարձակապէս ոչ մէկ ակնարկութիւն կը բովանդակէ, եւ հակառակ ասոր՝ ան շատ անելի, - կամ գրեթէ միայն, - ճանչցուած էր կոմս տիտղոսով՝, քան թէ իր սովորական անունով ու մականունով, որ շատ քիչեր պէտք է ճանչցած ըլլային: Թող որ մարդ դժուար մտքէն պիտի անցընէր, թէ ան կրնար ունենալ ուրիշ անուն մըն ալ:

Ինքս ասկէ քանի մը տարի առաջ միայն եւ մեծ գարմանքով յայտնաբերած եմ իր բուն անունը, երբ կը կարդայի Գրիգոր Զօհրապի օրագրութիւնը. պէտք եղաւ երկար-բարակ փնտռտուքներ կատարել՝ հասկնալու համար, որ այնտեղ բազմիցս անուն-մականունով յիշատակուող ինծի անծանօթ անձը՝ նոյն ինքն... Կոմսն է:

Երբ հրապարակային ձեռնարկի մը երեւեր, «Կոմսը», - իրարու կը շնորհակալանքները երկուդաժութեամբ ու պատկառանքով, մինչ յանձնախումբի անդամները իրար կ'անցնէին եւ կը փութային իսկոյն խելու գայն հասարակ մահկանացուներու խաժամուժէն ու կ'առաջնորդէին «պատուոյ հանդիսականներու» առաջին շարքը, անմիջական քովի կը կաթողիկոսին, կամ առաջնորդին, կամ քաղաքապետին, կամ կուսակցապետին, կամ նախարարին, եւ առ ի չգոյէ ասոնցմէ մէկուն՝ ամուսնու... Երեսփոխանի մը: Եւ ինք ամենայն հանդիսաւորութեամբ, դէմքի ու շարժումներու անբեկանելի պաշտօնականութեամբ մը՝ անխօս կ'ընդամաքէր այդ արարողակարգին եւ կը գրաւէր իր կարգավիճակին «պատշաճ» այրոջը:


Եւ այս չէր միայն: Փափագեան ունեցած է բժիշկ-ի տիտղոսը եւս, որքան ալ ոչ մէկ օր բժշկական համալսարան յաճախած կամ անոր քովէն անցած ըլլար: Այդ մակդիրին ծննդաբանութիւնը ծանօթ է ու բաւական գաւեշտական:

Առաքելութեան մը ծիրէն ներս ան կը ստիպուի գիշերել Վահի քրտական մէկ հեռաւոր գիւղին մէջ: Հազիւ տեղ հասած՝ մէկ ալ գիւղացիներու հոծ բազմութիւն մը կը հաւաքուի իջեւանած տան բակը. անոնք «դեղ կը խնդրէին բժիշկէն»: Ուրեմն ամէն քիչ թէ շատ եւրոպական ոճով հագուած անհատ անոնց համար բժիշկ կը նկատուէր եւ անպայման դեղ կ'ունենար հետը, եւ հիմա այդ բարիքէն օգտուելու եկած էին:

Տանտերը իր կողմէ շատ կը խնդրէ, որ յուսախաբ չընէ իր գիւղացիները: Աղէկ, սակայն ի՞նչ դեղ տալ, երբ տարրական մէկ հատիկ դեղահատ իսկ չունի քովը: Մինչ այս մտմտութիւն մէջ է ինք, անդին հիւանդները անելի պահանջկոտ ու անհամբեր կը դառնան: Եւ ահա կը յղանայ հանձարեղ գաղափար մը. ան մախաղին մէջէն կը հանէ իր նեղ օրերու մուկուր կազմող փոխինդին՝ փոքրիկ պարկը եւ թուղթի կտորներու մէջ քանի մը պտղունց դնելով կը յանձնէ հիւանդներուն՝ անկախ անոնց ունեցած ցաւէն. նոյն փոխինդը կը ստանայ գլխացաւէ տառապողը, աչքի հիւանդութիւն ունեցողը, կռակը ցաւողը, պնդութիւն ունեցողը, անքնութենէ տառապողը, անգաւակ՝ ստերը կինը, մանչ ցանկացող մայրը, հարսնանալ ուզող աղջիկը եւ, եւ... մինչեւ փոխինդը սպառի:

Ան գիշերը դժուար կը փակէ աչքերը, սակայն առտուն՝ լոյսը չբացուած, յարմար կը սեպէ գաղտագողի փախուստ տալ այդ գիւղէն, որպէսզի յանկարծ հաշիւ պահանջողի չհանդիպի, հետը տանելով «բժիշկի» տիտղոսը, որ շատ երկար կը ծառայէ իրեն՝:

Բայց ահա բախտը այնպէս կը դասաւորէ դէպքերը, որ տարի մը ետք



Վահան փափագեան

ան պարտաւորուի հանդիպիլ այդ նոյն գիւղը եւ իջեւանիլ նոյն քիւրվային՝ տունը, իսկ իր գալուստին անտիպը իրմէ առաջ հասած ըլլայ արդէն գիւղացիներուն, որոնք հիմա խառնեւոր եկած են խնդրելու «անցեալ տարուան այդ նոյն դեղէն, որ այնքան շա՛տ օգտակար եղած է իրենց»...

Փափագեանի գործունէութեան դաշտը եղած է Վանը, ուր ուղարկուեցաւ Վարդգէսի բանտարկութենէն ետք՝ 1903-ին: Ան եղբայրն էր գրագետ Վրթանէս Փափագեանի. ունեցած են ներսե անունով եղբայր մըն ալ՝ Պոլսոյ մէջ, ուր ան կը վարէր ազգային եռուն կեանք մը եւ կ'ըլլայ Եղեռնի առաջին զոհերէն:

Սահմանադրութենէն ետք, գրեթէ իր կամքէն անկախ, Վանի ներկայացուցիչ ընտրուեցաւ Թուրքիոյ խորհրդարանին՝ Զօհրապի, Վարդգէսի, Արմէն Գարոյի, Մուրատի կողքին, ուր ան նշանաւոր կը դառնայ իր լռութեամբ՝ արժանանալով «համր երեսփոխան»ի կոչումին⁵ (այս ալ ուրիշ տիտղոս մը), թէեւ այս «հանգամանքը» արգելք չ'ըլլար, որ հետագային ան երեսփոխան ընտրուի նա՛եւ Հայաստանի առաջին հանրապետութեան:

Միւս կողմէ, սակայն, իբրեւ քարտուղար՝ բաւական գործակցած է Զօհրապին ու ռուսական դեսպանատան առաջին թարգման Մանդելշթամին՝ Բարենորոգումներու ճամբով յառաջացած յանձնախումբի մը ծիրէն ներս: Եղեռնի նախօրեակին ան այցելութեան եկած էր ընտրաշրջանը, ու երբ կը վերադառնար Պոլիս՝ Մուշի վրայով, ինք եւ Ռուբէն տէր Մինասեան Սասունի լեռներուն մէջ անակնկալօրէն կը թակարդուին Եղեռնով եւ հրաշքով մը ազատելով համատարած կտորածէն՝ ողբալի պայմաններու մէջ կը հասնին Արեւելեան Հայաստան՝ իրենց հետ տանելով 30.000 սասունցիներէն ողջ մնացած ընդամենը 30 գիւղացիներ: Հիշենք առաջին դիմաւորողը կ'ըլլայ Ռոստոմը, որուն մանրամասն կը ներկայացնեն իրավիճակը:

Ռոստոմ կը կատարէ իմանալով Սասունի կտորածը, մանաւանդ որ դէպավարումի ապիկարութիւն եւս կը տեսնէ անոնց որոշումներուն մէջ, ուստի չի վարանի որ անոնց երեսին նետելու:

-Հո՛ն մնայիք եւ դուք ալ պատուով մեռնէի՞ք՝ բոլորին հետ:

Այնուհետեւ Փափագեան բախտը կապեց Առաջին հանրապետութիւնը կերտողներու փառանքին՝ միասին պայքարելով, միասին գոռոզելով ու նահանջելով, միասին պանդխտանալով ու անդու մաքարելով հետագայ տասնամեակներուն: Ան հեղինակն է, ի շարս այլոց, հայ ազատագրական պայքարէն քաղուած պատմութեանը հինգ հատորներու շարքի մը՝ «Խոնարի հերոսներ» խորագրով, որոնք օրին դպրոցականներու, - եւ ոչ միայն, - բարձի գիրքերն էին, ինչպէս նաեւ եռահատոր ստուար յուշագրութեան մը, որուն առաջին երկու հատորները յափշտակութեամբ կը կարդացուին:

Այս վերջին աշխատութեան առաջին հատորը կը բովանդակէ ժամանակակիցի, ակնատեսի ու որոշ առումով գործուն դերակատարի վաւերական մէկ պատումը Բարենորոգութեանց ծրագրի ծննդոցէն մինչեւ անոնց վերջնական յաջողութեան ու վաւերացումի մանրամասնութեանց: Անոր կցուած է նաեւ բարենորոգումներու ամբողջական պատճենը:

- 1-«Կոմս» ստորագրած է նաեւ իր գիրքերը:
- 2-Խարկած ու մանր աղացած ցորեն, որ հայ ֆետայիները կը կրէին իբրեւ հոգեպահուստ:
- 3-Google-ը անոր երկու տիտղոսները յիշած է:
- 4-Քրտերէն՝ բարեկամ, քաւոր:
- 5-Ի՞նչ կրնար խօսիլ խեղճը, երբ թրքերէն չէր գիտեր, իսկ թէ ինչո՞ւ Վասպուրականի հայութիւնը Օսմանեան խորհրդարանի ներկայացուցիչ կ'ընտրէ մէկը, որ թրքերէն չի գիտեր, - սա իր կարգին ուրիշ հանելուկ մըն է:
- 6-Կարգ մը աղբիւրներ Ռոստոմի բերանը կը դնեն սատկէիք բառը, որ անելի հաւանական է:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԿՈՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլպէնյան-Պօղիկեան
Սրբագրիչ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլպէնյան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
 - Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
 - Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուի կամ ոչ, չեն վերադարձուիր:
 - Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
 - Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

13 ԿՈՒՍԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՉԸ ...

Սկիզբ՝ էջ 3

Ժառանգություն, Լուսաւոր Հայաստան, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայաստանի Դեմոկրատական, Հայաստանի Հանրապետական, Հայաստանի Քրիստոնեա-դեմոկրատական Միություն, Յանուն Սոցիալական Արդարության, ՄԷԿ Հայաստան կուսակցությունները, որոնք հետեւեալ կոչով դիմեցին Հայաստանի եւ Արցախի հանրապետություններու իշխանություններուն:

«2020թ. Սեպտեմբերի 27-ին, Ատրպեյճանի կողմից, Թուրքիայի բացայայտ աջակցութեամբ եւ խրախուսմամբ սանձազերծած պատերազմը մէկ անգամ եւս շեշտեց Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների միջեւ ռազմավարական դաշինք կնքելու անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով Հայաստանի անկախութեան մասին 1990 Օգոստոսի 23-ի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին 1991թ. Սեպտեմբերի 2-ի հռչակագրերը եւ արձանագրելով Արցախի ինքնիշխանութեան հռչակման ու դրան յաջորդած գործընթացի օրինականությունն ու համապատասխանությունը միջազգային եւ ներպետական իրաւական կառուցակարգերին

Նկատի ունենալով՝

- Հայաստանի յանձնառությունը՝ երաշխաւորելու Արցախի ժողովրդի անվտանգությունն ու ինքնորոշման իրաւունքի իւրացումը եւ անվտանգութեան ապահովման հետ կապուած հարցերում համաձայնեցուած գործողությունների անհրաժեշտությունը,

- բանակցային գործընթացի լիարժեքութեան եւ արդիւնաւետութեան ապահովման առումով Արցախի Հանրապետութեան լիիրաւ մասնակցութեան անխուսափելիութիւնը,

- բանակցային գործընթացում Արցախի Հանրապետութեան անկախ կարգավիճակի, նրա տարածքային ամբողջականութեան վերականգնման եւ անվտանգութեան հետ կապուած հարցերի լուծման առաջնահերթությունը,

- մարդու հիմնարար իրաւունքների իրացման, անվտանգութեան, ռազմական համագործակցութեան, արտաքին քաղաքական գործունեութեան եւ բազմաթիւ այլ բնագաւառների հետ կապուած Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների իրաւայարաբերությունների՝ մինչ օրս լիարժեք կարգաւորուած չլինելու հանգամանքը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան իրաւապայմանագրային յարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտութիւնը:

Մենք՝ ներքոյ ստորագրեալ կուսակցություններս, կոչ ենք անում Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան իշխանություններին՝ անյապաղ քայլերի ձեռնարկելու երկու հանրապետությունների միջեւ ռազմավարական համապարփակ համագործակցութեան պայմանագիր կնքելու ուղղութեամբ»:

Ցիշուեցաւ նաեւ, որ յայտարարությունը բաց է միանալու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒԻԱԶԱՅ ԵՐԵՒ...

Սկիզբ՝ էջ 1

Կողմէ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ ՄԻՍԶԻ որոշումներուն ոտնահարումը, զինադադարի խախտումը եւ խաղաղ բնակչութեան սպառնալու ոճրային արարքները:

Կը դատապարտենք Թուրքիոյ անսահման աջակցութիւնը Ատրպեյճանին եւ Սուրիայէն թրջամետ զինեալ խմբաւորումներու շահագործումը եւ ուղարկումը Ատրպեյճան, իբր վարձկաններ կռուելու Ատրպեյճանի կողքին՝ Արցախի ու Հայաստանի դէմ:

Անհրաժեշտ է վերջ տալ կրաւորականութեան եւ պատասխանատուութեան հրաւիրել Ատրպեյճանն ու Թուրքիան:

Մենք, ինչպէս միշտ, այս օրհասական պահուն մեր բոլոր կարելիութիւններով զօրավիգ կը կանգնինք Հայաստանի եւ Արցախի հանրապետություններուն, Հայոց մարտունակ բանակին եւ հայ քաջարի զինուորին՝ հայրենիքի պաշտպանութեան ու խաղաղութեան հաստատման իրենց վեմ առաքելութեան մէջ:

Հայ ժողովուրդը խաղաղասեր ժողովուրդ է, սակայն երբ հարկ ըլլայ խաղաղութեան համար արիւն կը թափէ առանց ընկրկելու:


Յարգանք հայրենի հողի պաշտպանութեան համար զոհուած հայ նահատակներուն:

Ուժ, կորով եւ յաղթանակ Հայոց բանակին ու հայ կամաւորներուն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԺԱՆ ՕԳՃԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 4 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի, Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ-Հալէպ:

Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հեռաձայնով կամ առցանց:

ՉՈՅԳ ԲՈՌՆՑՔՈՎ'...

Սկիզբ՝ էջ 5

Նախայարձակ ու միջազգային կամքը ոտնակոխող կողմի դէմ: Կան Եւրոպայի Միութիւնը, Ռուսիոյ առանցքին շուրջ բոլորուած համախմբումները, կան անհատ երկիրները (ուր արաբական աշխարհը ունի յատուկ տեղ, եւ Եգիպտոսի հետ վերջերս հաստատուած կամուրջը կը զգենու կարեւորութիւն, իսկ Իսրայէլի հետ հաստատուած նոր կամուրջը առիթ է փորձաքարի զարնելու Պաքուն զինող պետութեան տրամադրութիւնները):

Միջին Արեւելքէն, Արաբական Ծոցէն մինչեւ Եւրոպա ու Չինաստան-Հնդկաստան, ինչո՞ւ չէ նաեւ ընտրապայքարի եւ այլ փոթորիկներով տարուած Միացեալ Նահանգներ, առանց անտեսելու ամերիկեան այլ երկիրներ, Աւստրալիա եւ այլք, այսօր աւելի՛ պատրաստակամ են կանգնելու Թուրքիոյ (եւ իր դաշնակիցներուն) ծաւալապաշտ ու կայսերական ծրագիրներուն, գործնական քայլերուն դէմ: Մեր արդար Դատին ու անոր ստորաբաժանումներուն ի նպաստ աշխատանք տանելու համար, կրնանք ըսել, որ մթնոլորտը ըստ բաւականին բարեխառն է (երբեք չենք արհամարհեր պետական մեքենաներուն ետին կանգնող «նիւթապաշտ աշխարհակալներուն» շահակցական կապերը՝ Թուրքիոյ, Ատրպեյճանի պէտ երկիրներու հետ):

Այս դաշտին մէջ, Հայաստանն ու Արցախը առանձին չեն. ամբողջ Սփիւռքը իր կարողականութիւնները դրած է ի սպաս Հայաստանի: Հայ Դատի գրասենեակները, նմանօրինակ «գործիքներ», նաեւ՝ Սփիւռքի ՓՈՂՈՅԸ լծուած է այս պայքարին, կոչուած է դառնալու ճակատը պաշտպանող բանակին կողքին կանգնող, թիկունքը ամրացնող երկրորդ բռունցքը: Եթէ հրապարակային ցոյցերը բողոքի ու դատապարտանքի ձայն բարձրացնելու առիթ են, կան անշուշտ պաշտօնական վարչամեքենաներուն եւ կուսակցական «գործիքներու» պատրաստելիք յուշագիր-տեղեկագիրները (սա աւելորդ գործ չէ), որոնք պիտի հասնին կառավարութեանց, ներկայացուցիչներու եւ ազդու կողմերու:

...Աւելի քան 100 տարի առաջ, Թուրքիա իր պետական կարողությունները ի սպաս դրաւ Հայաստանն ու հայութիւնը բնաջնջելու ծրագիրին, գործադրեց ՊԵՏԱԿԱՆ ՌՃԻՐ: Թուրքիա օգտուեցաւ Ա. Աշխարհամարտին ստեղծած խառնակ վիճակէն, վստահ ըլլալով, որ հայութեան ճիչը անկելի պիտի մնայ գիրար չեզոքացնելու ելած՝ աշխարհի հակամարտ ուժերուն կողմէ: Հայութիւնը սուղ, շա՛տ սուղ վճարեց Ցեղասպանութեան, սակայն իր հերոսամարտերով, Սարդարապատով եւ ինքնապաշտպանութեան այլ ճակատամարտերով, ձախողութեան մատնեց օսմանական-իթթիհատական երազները:

...Շուրջ 30 տարի առաջ, Թուրքիոյ զօրակցութիւնը վայելող եւ հազիւ 70 տարուան կեանք ունեցող Ատրպեյճանը նոր Սարդարապատ պարտադրեց հայութեան: Արցախեան Պայքարը 1994-ին հասաւ յաղթանակի, հայկական բռնագրաւեալ հողեր ազատագրուեցան:

Անցեալ 30 եւ աւելի տարիներուն, Արցախն ու Հայաստանը դիմագրաւեցին մանր Սարդարապատներ: Տաւուշի վրայ յարձակումը դեռ երեկ էր, իսկ սահմանին վրայ շաբաթէ-շաբաթ ինկող նահատակներուն հաշիւը պահուած է (չմոռնալ սփիւռքեան արձագանգները՝ Լոս Անճելըսի, Սան Ֆրանսիսքոյի, Ֆրանսայի, Լիբանանի, Սուրիոյ մէջ եւ այլուր...): Եւ ահա, 27 Սեպտեմբերին, հայութիւնը դիմագրաւեց նոր Սարդարապատ մը, որովհետեւ այս անգամ, Թուրքիա-Ատրպեյճան զինակցութիւնը կը փորձէ օգտուիլ Պսակաւոր ժահրի համաճարակին եւ աշխարհի ուշադրութիւնը այլապէս կլանող բազում փոթորիկներու մթնոլորտէն (փոքր նմանակը Ա. Աշխարհամարտի մթնոլորտին): Մեզի կը մնայ թե՛ պատերազմի դաշտին եւ թե՛ քաղաքական ու դիւանագիտական բեմերուն վրայ ցոյց տալ, որ աշխարհի մէջ բան մը փոխուած է, «Ցեղասպանութիւնը, հայաջնջումը պիտի չկրկնուին» լոկ շապիկներ ու ցուցատախտակներ զարդարող խօսք չէ, աշխարհն ալ հրաւիրուած է վար առնելու երկերեսութեան դիմակը, ոճրագործը կոչելու իր անունով, դատապարտանքի եւ մեղադրանքի խօսքերէն անդին՝ պատժամիջոցներ եւ նահանջներ պարտադրե թե՛ Ատրպեյճանին եւ թե՛ նոր աշխարհակալութիւնը երագող Թուրքիոյ:

Հայութիւնը կոչուած է գոյգ բռունցքով սեղաններ շրջելու եւ արդար երկրաշարժ ստեղծելու ոճրագործ գոյգին դէմ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Պարտւեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ


ԼՈՒՍԻՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԳՈՒԶՈՒԵԱՆ)

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 4 Հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի (ժամը 10:00-ին), Հայ Կաթողիկէ Ս. Երրորդութիւն (Չուարթնոց) եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Հայ Կաթողիկէ Միութեան ակումբէն ներս:





Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքին

- Սուրիոյ պասքեթի հաւաքականի մարզիչ Զատի Տարուիչ Կիրակի օր Ներկայացուց իր հրաժարականը: Ըստ հաղորդուած տեղեկութիւններուն, Սուրիոյ պասքեթի գործադիր մարմինը, որ կազմուեցաւ մէկ շաբաթ առաջ, մտադիր է հաւաքականին նշանակել օտար մարզիչ:



- Լաթաքիոյ մէջ սկիզբ առաւ Թիշրին ֆութպոլի մրցաշարքը, ուր իրենց մասնակցութիւնը բերին ութը խումբեր: Զալէպէն իր մասնակցութիւնը բերաւ Իթթիհատը, որ դուրս մնաց առաջին հանգրուանէն:

- Զալէպի ճալա մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ պասքեթի 3 * 3 մրցաշարքը, ուր տարիքային բաժանմունքով իրենց մասնակցութիւնը բերին աւելի քան 30 անհատական խումբեր: Մրցաշարքին իրենց անհատական մասնակցութիւնը բերին Նաեւ ԶՍԸՄ-ի եւ ԶԵԸ-ի խաղացողները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Գերմանական Պայերն Միունխը Դարձաւ ՈՒԵՖԱ-ի Սուփերգաւաթակիր

ՈՒԵՖԱ-ի Սուփերգաւաթի խաղին գերմանիոյ բազմակի պիտոյեան Պալարիան 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սպանիոյ Սելիլիան: 13-րդ վայրկեանին հանդիպումի կոլերուն բացումը կատարեց Սելիլիայի խաղացող Լուքաս Օգամպոսը տուգանային հարուածով: Գերմանացիները



տիրապետելով խաղարկութեան յաջողեցան վտանգի ենթարկել մրցակիցին դարպասը. 34-րդ վայրեանին Լեոն Գորեցկանը հաւասարեցուց արդիւնքը: Երկրորդ կիսախաղը շարունակուեցաւ Նոյն կերպով, խումբերը այլ առիթներով հասան դարպաս բայց անոնց բոլոր յարձակումները ավարտեցան ապարդիւս: Զալէպէալ ժամանակաշրջանի խաղարկութեան անցնելով, 104-րդ վայրկեանին գերմանացիները անգամ մը եւս յաջողեցան ցնցել մրցակիցին դարպասը, որուն շնորհիւ տիրացան եւրպայի սուփեր գաւաթին:

Լուիս Սուարեզ Տեղափոխուեցաւ Աթլէթիքօ Մատրիս

Քաթալոնիոյ պարսելոնա ակումբի խաղացող Լուիս Սուարեզ հեռանալով իր խումբէն միացաւ մայրաքաղաքի Աթլէթիքօ Մատրիսին: Սոյն լուրը երկու ակումբները իրենց պաշտօնական կայքէջին մէջ հաստատել է տք, Սուարեզ մամուլի ասուլիսի մը հրաւիրեց թղթակիցները,



ուր պաշտօնապէս յայտարարեց իր հեռացման լուրը: Սուարեզ չկրցաւ գապել իր արցունքները. Ան ըսաւ թէ վեց տարիներու ընթացքին յաջողեցաւ մտերմիկ մթնոլորտ մը ստեղծել Պարսելոնայի մէջ եւ ոչ մէկ վայրկեան կ'երեւակայր թէ ան այս կերպով պիտի լքեր խումբը: Ան շնորհակալութիւն յայտնեց իր ընկերներուն մասնաւորապէս Մեսսիին որ եղբոր պէս եղաւ միշտ իր կողքին: Նշենք թէ Ուրուկուէյցի յարձակողը քաթալոնեական խումբին միացաւ 2014 թուականին: Ան վեց տարիներու ընթացքին խումբին հետ նուաճեց 13 տիտղոս: Սուարեզ խումբին հետ նշանակած է 198 կոլ:

Շալքան Պաշտօնագուրկ Ըրաւ Մարզիչը

Գերմանիոյ Շալքա ակումբը պաշտօնագուրկ ըրաւ ֆութպոլի խումբի մարզիչ Տեւիտ Ֆակները, խումբին արդիւնքները ձախող ընթացքի մէջ ըլլալուն համար: Շալքայի տնօրէն Եորկէն Շնայտեր ըսաւ թէ մենք խումբէն կը սպասէինք, բայց պիտոյեանութեան առաջին երկու հանգրուաններուն արձանագրուած արդիւնքները, մեզի ստիպեցին առնելու այս որոշումը: Ըստ գերմանական թերթերուն, խումբի մարզիչի թեկնածուներէն մէկն է Ռալֆ Ռանկնիկը, որ նախապէս երկու առիթներով ստանձնած է Շալքայի մարզիչի պաշտօնը: Նշենք թէ Գերմանիոյ պիտոյեանութեան առաջին հանգրուանին Շալքան 8-0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Պայերն Միունխէն, իսկ շաբաթ օր 3-1 արդիւնքով զիջեցաւ Ֆերտեր Պիրմէն խումբին:



Թիւ 24
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

	e	q	o	p	թ	յ	ճ	ւ
8		♔						
7								♚
6							♙	♜
5								♞
4							♚	♙
3							♙	
2						♔		
1	♔							
	a	b	c	d	e	f	g	h

Նախորդ Թիւի Պատասխանն է g 4 #
ՀՄԸՄ-ի ձատրակի Յնձիւ.

Երկուշաբթի 5/10	Երեքշաբթի 6/10	Չորեքշաբթի 7/10	Հինգշաբթի 8/10	Որբաբա 9/10	Շաբաթ 10/10	Կիրակի 11/10
17° 32°	17° 32°	17° 33°	19° 34°	19° 34°	19° 33°	19° 33°

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ...

ՎՍԿԻՊՐ՝ էջ 1

Վեհափառ Հայրապետի հեղինակած՝ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ» հատորի արաբերեն թարգմանության թարգմանիչ, հալեպահայ գրող դոկտոր Հուրի Ազեգեան:

Նիստի բացման աղօթքին յաջորդեց Գերաշնորհ Պուրթոս Զասիս Եպիսկոպոսի բացման խօսքը: Ան քրիստոնեական սիրով ողջունեց ներկաները, հակիրճ անդրադարձաւ քրիստոնեայ եկեղեցւոյ դիմագրաւած նորօրեայ տարաբնոյթ մարտահրաւերներուն եւ ընդգծեց քրիստոնեական հաւատը ու ամրապնդուած՝ միասնաբար գանոնք դիմագրաւելու անհրաժեշտութիւնը:



Նախորդ նիստի ատենագրութեան վաւերացումէն ետք, ներկաներուն կողմէ տեղի ունեցան խորհրդակցութիւններ եւ կարծիքներու փոխանակում, քննարկուեցան օրուան օրակարգի կետերը, ուր առաջնահերթութեան կարգով ընդգրկուած էին Սուրիական Հայրենիքի ներկայ ճակատագրական կացութեան շրջագիծէն ներս քրիստոնեայ համայնքներու բազմաբնոյթ գործունէութեանց հետ առնչուած հարցեր:

Հոգեւոր առաջնորդները, անձնապէս եւ յանուն իրենց գլխաւորած համայնքներուն, շնորհաւորեցին Հայլէպի Վաճառականական Պալատի նորընտիր կազմը, շեշտելով քրիստոնեայ տարրին մասնակցութեան կարեւորութիւնը սուրիական պետական-կառավարական շրջանակներէ ներս, յատկապէս վերականգնումի այս փուլին, երբ իւրաքանչիւր սուրիացի քաղաքացի հրաւիրուած է իր հնչելու լուծման ձգելու Սուրիոյ վերաշինութեան, վերակազմակերպման եւ վերագարգացման անյետաձգելի գործին:



Վերոյիշեալ բոլորակէն ներս, հոգեւոր առաջնորդները առանձնաբար խօսեցան իրենց համայնքներէն ներս ծաւալած վերականգնումի եւ վերաշինութեան աշխատանքներուն, առկայ դժուարութիւններուն եւ ապագայի ծրագրումներուն մասին, Սուրիական Հայրենիքին կառչած մաալու հաստատ համոզումով: Ինչպէս նաեւ, բոլորին կողմէ վերահաստատուեցաւ COVID-19 համավարակին դէմ դնելու շարունակութեան անհրաժեշտութիւնը՝ յարգելով կանխարգիւման եւ կանխագոշակական բոլոր միջոցառումները:

Գերաշնորհ Ս. Մասիս Ա. Եպս. Չօպուեան իր կարգին խօսք առնելով, փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական ողջունները, յայտնելով որ մօտիկ անցեալին գտնուելով Ալթիլիասի մէջ ինք անձամբ կրնայ բոլորին փոխանցել շնորհաբաշխ Վեհին անվերապահ գորակցութիւնն ու քաջալերանքը սուրիացի ժողովուրդին ընդհանրապէս, եւ Հայլէպի տակաւ պայքարող ժողովուրդին մասնաւորապէս:

Այս դոկտոր Հուրի Ազեգեան ամփոփ տողերով ներկայացուց Արամ Ա. Կաթողիկոսի «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ» խորագրեալ հատորը՝ անդրադառնալով գիրքին մասնաւորապէս հանրագիտարանային բացառիկ բնոյթին, ուր Վեհափառ Հայրապետը - որպէս Հայ Առաքելական Եկեղեցւոյ ազգընտիր Հովուապետ, հմուտ Վարչագետ, միջազգային դէմք դարձած հայ Էքիմենիստ, համաշխարհային բարձրագոյն մակարդակներ նուաճած Արեւելեան-Ուղղափառ ուշագրաւ Աստուածաբան եւ միջեկեղեցական յարաբերութեան Մարդ, հրաւերի, հաղորդակցութեան ու երկխօսութեան անձ, որ խորատոյգ մօտեցումով յաջողած է քայլ պահել արդի աշխարհի անհասանելի սլացքին հետ, եւ Աւետարանն ու քրիստոնեական հաւատը պատշաճեցնել նոր օրերու պահանջներուն - , յստակ ու յանդուգն կերպով եւ առարկայական մօտեցումով խօսած է Հայ եկեղեցւոյ պատմութեան, նուիրապետական կարգերուն, հաւատքի հիմունքներուն, հարուստ ծեսին, ծաւալուն գործունէութեան մշակութային, քրիստոնեական դաստիարակութեան, ընկերային ծառայութեան, կրթական, յարաբերական տարածքներուն, հրատարակչատան մասին, միաժամանակ ներկայացնելով

ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՍՏՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՆ...

ՎՍԿԻՊՐ՝ էջ 1

Արարողութեան ներկայ էին՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արհի. Ս. Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի ներկայացուցիչ պատուելի Սիմոն Տեր Սահակեան, Հայաստանի Հանրապետութեան Հայլէպի Գլխաւոր Հիւպատոս Մեծարգոյ Արմէն Սարգսեան, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբի զինուորներ, սուրիահայ



երեք կազմակերպութիւններու, մշակութային, բարեսիրական, մարզական եւ երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներ, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութեան եւ Կրօնական Ժողովի անդամներ, երեք համայնքներու հոգեւորականներ եւ ժողովուրդի զաւակներ:

Դարաց դասը մեր հայրապետներու աղօթքներով եւ շարականներով ներկաներուն հոգիները համակեց Հայ եկեղեցւոյ հարուստ ժառանգութեամբ: Այնուհետեւ Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերապայծառ Տէրը եւ Պատուելի Սիմոն յաջորդաբար աղօթք բարձրացուցին առ Աստուած հայցելով, որ շուտով խաղաղութիւն հաստատուի Արցախի Հանրապետութեան պետական սահմանին վրայ եւ Արցախի մեր բնակավայրերը վերագտնեն իրենց ապահովութիւնն ու անվտանգութիւնը:



Անոնք հաստատեցին, որ Հայաստան-Արցախ-Սփիւռք մէկ բռունցք կազմելով տեր պիտի կանգնին մեր պապեանական սրբազան հողերուն եւ ծախողութեան պիտի մատնեն մեր դարաւոր թշնամին: Զրիստոսի Սուրբ Խաչի աստուածային գորութեան ապաւինելով անոնք մաղթեցին, որ թշնամիին խաւարային ծրագիրները խորտակուին եւ ազատ



ու անկախ Արցախը վերագտնեն իր պայծառութիւնը:

Հոգեւոր պետերը իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Նահատակ հերոսներու ընտանիքներուն, անսպառ ուժ եւ կորով մաղթեցին հայկական բանակի կամաւոր զինուորներուն եւ խաղաղ օրեր՝ Արցախի եւ Հայաստանի բնակչութեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով ողջունեց ներկաները, որոնք եկած էին աղօթակից դառնալու եւ գորակցելու Հայաստանի եւ Արցախի մեր ժողովուրդին եւ յանուն Սուրիահայութեան անգամ մը եւս իր գորակցութիւնը յայտնեց Հայաստանի եւ Արցախի մեր պետականութեան, հայոց բանակին եւ խաղաղ բնակչութեան:

«Հայ եկեղեցւոյ մէջ հաւաքական ներկայութիւնը եւ միասնական աղօթքը լաւագոյն դրսեւորումն է հաստատելու սուրիահայութեան անվերապահ գորակցութիւնը հայրենիքի եւ Արցախի մեր ժողովուրդին», ըսաւ սրբազան հայրը:

Արարողութիւնը վերջ գտաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգի երգեցողութեամբ:

Հայ եկեղեցւոյ ներկայ ժամանակներու առաջնահերթութիւններն ու մարտահրաւերները, ի խնդիր անոր նուիրական առաքելութեան պահպանման եւ արդիականացման, նոյնիքն հայ երիտասարդութեան գործօն մասնակցութեամբ:

Դոկտոր Հուրի Ազեգեան աւարտին յայտնեց նաեւ գիրքին արաբերէն եւ այլ լեզուներու թարգմանութիւններուն կարեւորութիւնը, եւ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին, Գերաշնորհ Ս. Մասիս Ա. Եպս. Չօպուեանին, ժողովին, նաեւ բոլոր անոնց, որոնք քաջալեր հանդիսացած էին այս թարգմանութեան:

Ներկաներուն բաշխուած գիրքի օրինակները ընդունուեցան խոր գնահատանքով եւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ուղղուած արեւշատութեան ու նորանոր նուաճումներու ջերմ մաղթանքներով:

Ժողովը վերջ գտաւ փակման հաւաքական աղօթքով: